

Պրիւքսէլի Մէջ Տեղի Ունեցաւ ԵՄ-Հայաստան Համագործակցութեան Խորհուրդի 16-րդ Նիստը

Պրիւքսէլի մէջ մեկնարկեց Հայաստան-Եւրոպական Միութիւն Համագործակցութեան Խորհուրդի 16-րդ նիստը, որուն կը մասնակցի ՀՀ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանտեան:

Նիստի օրակարգին վրայ եղած են Հայաստան-Եւրամիութիւն յարաբերութիւնները՝ արեւելեան գործընկերութեան եւ եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան շրջագիծէն ներս, ԵՄ-Հայաստան ապագայ յարաբերութիւններու իրաւական նոր հիմունքները, մոտաւոր արտօնագրի պարզեցումը, տնտեսական եւ առեւտրային համագործակցութիւնը:

Քննարկուած են նաեւ քաղաքական հարցեր, որոնց շարքին Լեւոնալին Ղարաբաղի հարցի լուծման, տարածաշրջանային խնդիրներու, մամուլի ազատութեան, մարդու իրաւունքներու, օրէնքի

զերակայութեան, ժողովրդավարութեան, քաղաքական երկխօսութեան ու բարեփոխումներուն առնչուող հարցեր:

Եւրամիութեան Խորհուրդը նախագահող Հոլանտայի արտաքին գործոց նախարար Պերտ Գունդերսըսած է, որ Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորումը կը մնայ Եւրամիութեան առաջնահերթութիւնը, եւ որ «ստատուս քոյի» պահպանումը անընդունելի է:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանտեան Խորհուրդի նիստին համառոտ ներկայացուցած է Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման բանակցային գործընթացի վերջին զարգացումները եւ անցեալ տարեվերջին տեղի ունեցած Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հանդիպման արդյունքները:

Սուրիահայութեան Ի Նպաստ Թելթոնը Տեղի Պիտի Ունեցայ Փետրուար 21-ին



Տեսարան Սուրիահայութեան ի նպաստ տեղի ունեցող թելթոնի առթիւ կազմակերպուած մամուլայաւարտութեան

Փետրուար 21-ին, Սուրիահայութեան ի նպաստ կայանալիք դրամահաւաք-թելթոնի առիթով, Լոս Անճելոսի մէջ տեղի ունեցաւ մամուլային ասուլիս մը, ներկայութեամբ հայկական թերթերու եւ հեռատեսիլի ընկերութիւններու ներկայացուցիչներուն եւ Սուրիահայութեան Օժանդակութեան Հիմնադրամի (ՍԱՐՖ) վարչութեան անդամներուն:

Ասուլիսի ընթացքին Շանթ Սահակեան խօսեցաւ Սուրիահայութեան համար՝ ՍԱՐՖ-ի տարած աշխատանքներու կարեւորութեան մասին: Ան կոչ ուղղեց համայն սփիւռքին, որպէսզի իր մասնակցութիւնը բերէ այս թելթոնին:

ՍԱՐՖ-ի ծնունդի եւ նպատակներու մասին խօսեցաւ Ռաֆֆի Գէնտրիճեան:

Վազգէն Մատնեան ներկայա-

ցուց թելթոնի ծրագիրը, եւ յայտնեց որ պիտի սփռուի «Արմինիա», «Շանթ» եւ «Հորիզոն» հեռատեսիլի ալիքներէն: Նպատակակէտն է հաւաքել մէկ միլիոն տոլար Սուրիահայութեան կրթանպաստ, սննդամթերք, ջուրի մատակարարում եւ այլ անմիջական կարիքներ հայթայթելու նպատակով:

Մանուկ Սէրայտարեան անդրադարձաւ Հայկալի եւ Հայկաստանի թելթոնի մասին եւ Սուրիոյ մէջ գտնուող դպրոցներու եւ եկեղեցիներու ներկայ վիճակի մասին: Ան շեշտեց յատկապէս գաղութի կարեւոր դերը հայկական սփիւռքի կեանքէն ներս:

Կոչ կատարուեցաւ համայն սփիւռքահայութեան որպէսզի բերեն իրենց գործօն մասնակցու-

Շարք էջ 5

Իսրայուլի Մէջ Հազարաւորներ Կը Սգան Հրանդ Տիմրի 9-րդ Տարելիցը



Թուրքիոյ հազարաւոր հաղափառներ հաւաքուած են Լիւրն Հրանդ Տիմրի մահատաղաւթեան 9-րդ տարելիցը

Պոլսահայ մտաւորական Հրանդ Տիմրի սպանութեան 9-րդ տարելիցին առթիւ, Յունուար 19-ին, հազարաւոր քաղաքացիներ հաւաքուած են Իսթանպուլի Շիրալի թաղամասին մէջ գտնուող «Ակօս» թերթի նախկին խմբագրատան առջեւ, ուր տեղի ունեցած էր ոճրագործութիւնը:

Պոլսոյ հայկական «Ակօս»-ը կը տեղեկացնէ որ, հաւաքուածներուն մէջ եղած են յայտնի գործիչներ, խորհրդարանի անդամներ, արուեստագէտներ ու բազմաթիւ քաղաքացիներ:

Շէնքին վրայ փակցուած է «Ախպարի՛կ, կարօտով, գայրտոյթով յամառօրէն այտեղ ենք» գրութեամբ ցուցանակ մը:

Ոստիկանութիւնը հսկողու-

թեան կէտեր հաստատած է «Ռամատա» հիւրանոցի եւ «Մատո» սրճարանի դիմաց:

Տիմրի չիշատակին նուիրուած միջոցառումներ տեղի ունեցած են Թուրքիոյ մի քանի այլ քաղաքներուն մէջ եւս:

Միւս կողմէ, Երեւանի մէջ, խումբ մը ակտիւիստներ դիմեցին քաղաքապետ Տարօն Մարգարեանին՝ մայրաքաղաքի փողոցներից մէկը Պոլսահայ հրապարակախօսի անունով կոչելու առաջարկով:

Ստորագրահաւաքի կազմակերպիչն է «Նոր զարթօնք» նախաձեռնութեան անդամ, պոլսահայ Նշան Գիւրէճը: «Հայաստանը չիշուէ է քեզ» կարգախօսին միացած են նաեւ Հայաստանի մէջ ապրող բոլորները:

«Հայերը Միշտ Պիտի Սնան Երուսաղէմի Մէջ» Ըսած է Պաղեստինի Նախագահ Ապպաս

Երկուշաբթի, Յունուար 18-ին Բեթ-Նեղէմի մէջ նշուեցաւ հայկական տոմարով Ս. ծննդեան տօնը: Այս առթիւ տեղի ունեցած եկեղեցական արարողութիւններուն ներկայ գտնուեցաւ Պաղեստինի նախագահ Մահմուտ Ապպաս, որ այս առթիւ յայտարարեց թէ, «հայերը այս հողերու աղն են ու երբեք պիտի չհեռանան այստեղէն»:

Եկեղեցական պատարագին յաջորդած պաշտօնական ընդունելութեան ընթացքին, Պաղեստինի նախագահը ելոյթ ունենալով ըսաւ, որ անոնք որոնք կոչ կ'ընեն Քրիստոնեաները եւ յատկապէս հայերը հեռացնելու մասին, պիտի չհասնին իրենց նպատակին: Հայերը միշտ պիտի մնան Երուսաղէմի, Բեթ-Նեղէմի եւ Ռամալլայի



Նախագահ Ապպաս շրջապատուած հայ եկեղեցականներով

մէջ: «Նման կոչեր ընողները, իրենք է որ պետք է հեռանան», ըսած է Մահմուտ Ապպաս:

Նախագահ Ապպաս Պաղեստինի ժողովուրդի ճակատագիրը նմանցուց Օսմանեան կայսրութեան մէջ հայերու ենթարկուած ճակատագրին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ով՞ Ում Սերժ Սարգսեանը Ձեւաւորում է

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Սահմանադրութեան փոփոխութիւնն արդէն իրողութիւն է, բայց փոփոխութիւնների գերնպատակ հռչակուած իշխանութեան գաղափարն է հակակշիռների առկայութիւնը մօտ ապագայում էլ անհնար է: Մինչեւ Սերժ Սարգսեանի պաշտօնավարման վերջին ժամկէտը՝ 2018-ը, ամէն ինչ մնալու է Սերժ Սարգսեանի ձեռքում, ով հին Սահմանադրութեամբ փաստացի պետութեան գլուխն է հանդիսանում: Այդուհանդերձ, իշխանութեան ներսում տեղի ունեցող տեսանկիւնն է ոչ այնքան հակադրութիւնները, զնալով կը սրուեն, իրենց ամբողջական արտայայտութիւնը կը ստանան, թերեւս, Սերժ Սարգսեանի ժամկէտի աւարտին, առաւել ջգտելով 2017-ին՝ նոր խորհրդարանի ձեւաւորման ժամանակ. ինչպէս միշտ, իշխանութեան առանցքային դերակատարները կը ջանան օրէնսդիր մարմնում ունենալ իրենց թիւը՝ իւրաքանչիւրին, որոնք կը դառնան յետագայ իշխանութեան ձեւաւորման հիմքը, մանաւանդ որ երկիրն անցում է կատարում խորհրդարանական համակարգին եւ այս առումով՝ խորհրդարանի դերակատարումը շեշտակիորէն մեծանալու է: Իշխանութեան ներսում գոյութիւն ունեցող թեւերը, որոնք մեծ հաշուով կառավարում են Սերժ Սարգսեանի կողմից, բայց եւ հանդիսանում կարեւորագոյն դերակատարներ, ներկայումս իրենց ազդեցութիւնների տիրոջ ընդլայնելու ու ամրապնդելու վեկտոր են բռնել: Այսպիսով՝ իշխանական հիերարխիայում Գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեան-ՀՀ նախագահի իրաւական հարցերով օգնական Գէորգի Կոստանեան-ՔԿՀ վարչութեան պետ Արթուր Օսիկեանն բեւեռն աչլեւս անհերքելի իրողութիւն է: Այս եռակի համաձայնութեամբ է կայանում ոչ միայն իրաւական համակարգում կադրային տեղաշարժն ու նշանակումները, ոչ միայն բանտերի, այլ բանակի սննդի մատակարարման ընկերութիւնների ընտրութիւնը:

Գաղտնիք չէ՝ տարիներ շարունակ այդպիսի ընկերութիւնների գործունէութեան սկզբունքները եւ ինչպիսի իւրոտ պատու է նման կարգավիճակը, որը պատահական մարդկանց բաժին չի հասնում: Ի դէպ, վերջերս բանակի մատակարարման, մասնաւորապէս, սննդի որակի եւ ժամկէտներին հետ կապուած կրկին լրջագոյն հարց է առաջ եկել, ինչիւրն անգամ հասել է Դատախազութիւն եւ, բնականաբար, գործը ջրուել է: Այս միջադէպը աւելի է հանդիսացել, որ Սերժ Սարգսեանը հանդիպում կազմակերպի զենեարայտէտի հետ եւ լրջագոյնս զգուշացնի պատասխանատու օղակներին:

Օղակում փոքր-ինչ թոյլ են Արթուր Օսիկեանի դիրքերը: Վերջինս իր ոչ այնքան երկարամեայ գործունէութեան ընթացքում հասցրել է իր դեկավարած կառույցը դարձնել սեփական բոստանը՝ այնտեղ տանելով ծանօթ-բարեկամներին, քաւոր-սանիկներին, բաջանաղ-աներձագներին՝ փորձելով ինքնուրոյնութիւն դրսեւորել, բայց յայտնուել է ուշագրութեան կենտրոնում: Ոչ վաղ անցեալում Գէորգի Կոստանեանը ցանկացել է նրան փոխարինել Կոստայի մարզի դա-

տախագով, սակայն, Օսիկեանը հրաժարուել է ցուցաբերած կամակորութիւններից եւ հաւատարմութեան երդում տուել: Միւս առանցքային թեւը վարչապետ Յովիկ Աբրահամեանինն է, ով մեծ ազդեցութիւն ունի ՀՀ լայն շերտերի վրայ, նրա առանձնաչատկութիւնը նրանում է, որ համարում է ՀՀ-ի թիմի անդամ, կանգնած է եղել գործող իշխանութեան կայացման ակունքներում, հանդիսացել իշխանութեան վերարտադրութեան գործող դերակատարներից, թերեւս, այս է պատճառը, որ կարողանում է զգալի հատուածի նկատմամբ վերահսկողութեան խնդիրը լուծել, ինչպէս նաեւ կապող օղակ դառնալ իշխանութեան ու ինչ-ինչ խմբերի միջեւ, ասել է թէ, նա տնօրինում է թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական քրտանների ինչ-որ մի մասը, ազդեցութիւն ունենում անգամ կադրային նշանակումներում: Վերջին երկու տարիներին զգալիորէն ամրապնդուել են նաեւ նախագահի աշխատակազմի դեկավար Վիգէն Սարգսեանի դիրքերը, նա հրաշալի կազմակերպիչ է եւ տիրապետում է պալատական ողջ ինտրիգին ու հեռահար հաւակնութիւններ ունի, այդ համատեքստում, թէպէտ, առերեւոյթ հանդարտութեան, ստուերային պայքար է ընթանում վերջինի ու վարչապետ Յովիկ Աբրահամեանի միջեւ: Մինչեւ վերջերս նոյնպիսի ամբիջիաներ էր դրսեւորում Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի թիմի կողմից, նա էր ապագայի վարչապետի կամ երկրի դեկավարի պաշտօնի ամենառեւել թեկնածուն, բայց այդ յոյսերը խամրեցին, երբ գնալով բոցալուրուեցին նրա կնոջ շուրջ խօսակցութիւնները: Իշխանութեան երբեմնի ընդգծուած օղակներից մէկի փայլն էլ վերջին ժամանակներում ակնյայտօրէն խամրեց, զսպեցին երբեմնի անբռնազբօս Վովա Գասպարեանի կրքերը, ով ոչ միայն Ծառուկեանի դեկավարած կուսակցութեան առաջնորդն էր, այլեւ իշխանութեան կամ նրա նկատմամբ «անհնազանդների», նա յայտնում էր ճիշտ ժամանակին, ճիշտ տեղում կամ էլ հակառակը՝ բերման ենթարկում նրանց: Լաւատեղեակները փաստում են, որ, այդուհանդերձ, նախագահը չի պատրաստուում պատմութեան գիրկն ուղարկել ՀՀ Ոստիկանապետին, մեծ աշխարհ է, ով գիտէ, մի օր կրկին նրա օգնութեան կարիքը կը զգացուի:

Իշխանական վերնախաւում իրենց ուրոյն դիրքն ունեն Սերժ Սարգսեանի այսպէս կոչուած «լիւբիմիները», որոնք չնայած ազդեցութիւնների նոյնպիսի ոլորտ չունեն, ինչպիսին նախորդները, բայց մտնում են արտօնեալների խաւի մէջ. այդ խաւի մէջ ընդգրկուածները խիստ վստահելի եւ հաւատարիմ անձինք են: Նրանց թոյլ է տրուում կամ ներուում է շատ բան: Նրանք են Տարօն Մարգարեանը, Արմէն Աշոտեանը, Նախագահի վերահսկողականի պետ Յովհաննէս Յովսէփեանը եւ Էդուարդ Շարմազանովը: Ի դէպ, բոլորովին վերջերս Կոստանեանը որոշել է հիւրընկալել այս խմբի անդամներից ոմանց՝ ինչ-ինչ հիմնաւոր պատճառներով, սակայն

Կառավարութեան Փոփոխութեան Երեք Նպատակ

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ

Հայկական մամուլն արդէն տեւական ժամանակ գրում է, որ սպասուում են կառավարութեան կադրային փոփոխութիւններ, եւ պաշտօնեաները ահուգողով սպասում են դրանց: Թէ ինչու են պաշտօնեաները դրանց ահուգողով սպասում, այդքան էլ պարզ չէ: Հակառակը, պաշտօնեաները դրանց պէտք է սպասեն յոյսով, որովհետեւ ներկայումս պաշտօնավարումը Հայաստանի պաշտօնեաների համար, խօսքն իհարկէ բարձրաստիճանների մասին է, որոնք միլիոնատէրեր եւ միլիարդատէրեր են, ծանր բեռ է: Նրանք իհարկէ կը ցանկանան թողնել պատասխանատուութիւնը եւ վայելել միլիոնները եւ միլիարդները:

Միւս կողմից, հասկանալի է, որ պատասխանատուութիւնը միայն պաշտօնը չէ, կամ պաշտօնը պատասխանատուութիւն է հասարակութեան առաջ, բայց դրանից բացի կայ պատասխանատուութիւն համակարգի առաջ: Ու դա արդէն որոշուած է ոչ թէ պաշտօնով, այլ միլիոններով եւ միլիարդներով: Որքան դրանք շատ են, այդքան մեծ է պատասխանատուութիւնը համակարգի առաջ, որովհետեւ հենց այդ համակարգն է թոյլ տալիս պետութեան հաշուին դառնալ միլիոնատէր եւ միլիարդատէր:

Այստեղ իհարկէ ահուգողի հարց լինել կարող է, որովհետեւ եթէ ոեւէ մէկն այլեւս նախարար չլինի, ապա կարող է աստիճանաբար կորցնել համակարգային նշանակութիւնը, իսկ դրա հետ մէկտեղ՝ նաեւ հնարաւորութիւնները: Ահուգողի այլ պատճառ էլ կարող է լինել: Բանն այն է, որ կառավարութեան կադրային փոփոխութիւնները կարող են ուղեկցուել նաեւ ցուցադրական հետապնդումներով, որոնք պահանջարկ կարող են ունենալ նախընտրական տարուայ քարոզչական տրամաբանութեան շրջանակում:

Իսկ ամբողջական ձեւական հետապնդում չի լինում, եթէ անգամ նպատակն աւելի շատ իմիտացիան է: Այնպէս որ, այստեղ էլ ահուգողի պատճառ կայ:

Բայց, պաշտօնեաները չունեն զլխաւոր ահուգողի պատճառը՝ հասարակութեան առաջ պատասխանատուութիւնը:

Եւ այդ իմաստով, ամենակարեւոր հարցը, որ առկայ է կառավարութեան կազմում, կառավարման համակարգում կադրային փոփոխութիւնների մասով այն է, թէ ո՞րն է դրանց նպատակը: Ընդհանուր առմամբ, նպատակները կարող են լինել երեքը՝ ներիշխանական նոր պայմանաւորութիւններ եւ վերադասաւորումներ, միտուած 2017 թուականին, նախընտրական քարոզչական ակցիա եւ հանրային դժգոհութեան գոլորշի բաց թողնելու տարբերակ, եւ իրավիճակը հիմնաւորապէս փոխելու, տնտեսական խիստ անարդիւնաւէտ քաղաքականութիւնը արմատապէս շրջելու, կոռուպցիայի դէմ իրապէս պայքարելու տարբերակ:

Այդ երեք հիմնական ուղղութիւններից ո՞րն է փոփոխութիւնների շարժառիթը: Հասարակութեան, պետութեան շահը առնչուած է միայն դրանցից վերջինին, եւ եթէ շարժառիթն իրավիճակ փոխելը չէ, ապա հանրութեան համար որեւէ նշանակութիւն չի կարող ունենալ

կադրային փոփոխութիւնը, որի նպատակն է ասենք ՀՅԴ-ին ու ԲՀԿ-ին ինչ որ պաշտօններ տալը, կամ՝ Սերժ Սարգսեանի կամ Յովիկ Աբրահամեանի համար անցանկալի պաշտօնեաներից ազատուելը:

Վերջին տարբերակը ամենաէականն է: Չի բացառում, որ իշխանութիւնն ունի ինչ որ բան փոխելու ցանկութիւն, զուտ հանրութեան սոցիալական դժգոհութիւնը մեղմելու համար, դրանից բխող ռիսկերը նուազեցնելու համար, չատկապէս այն դէպքում, երբ տեսնում է, թէ ինչ է կատարուում Ատրպեյճանում:

Բայց, ինչիւրն այն է, որ Հայաստանում արդիւնաւէտ փոփոխութեան կարող է բերել ուժգին մոտիւացիան, այսպէս ասած պրոգրեսիւ մոտիւացիան, որի նպատակը ոչ թէ սոցիալական ընդլզման ռիսկերը նուազեցնելն է, այլ պետութեան պատկերը փոխելը: Հայաստանում իրավիճակի էական փոփոխութիւն բերել կարող է այն իշխանութիւնը, որն ունի այլ մտապատկեր, որն ունի պետութեան այլ պատկերացում, որի համար իշխանութիւնը կեանքի եւ մահուան հարց չէ, եւ անգամ հարուստ ու աղքատ կեանքի հարց չէ:

Մեծ հաշուով, իրական փոփոխութեան ցանկութիւն եւ դրան հասնելու պատկերացում ունեցող իշխանութիւնն ինքը չի փոխում ոչինչ, այլ ստեղծում է հնարաւորութիւններ, որոնց միջոցով հանրութիւնն է փոխում պետութեան վիճակը, որակն ու պատկերը:

Հետեւաբար, «ահա ձեզ նոր մարդիկ» փիլիսոփայութիւնը այլեւս մաշուած, սնանկ է որպէս կառավարման տեխնոլոգիա: Որեւէ բան կարող է արժենալ «ահա ձեզ հնարաւորութիւններ»-ը:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԵ ԱՁԱՊԱՅԼԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
 MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բանդայի Գործով Նոր Ձեռքակալութիւններ «Պետական Դատական Տեղոր են Յիշեցնում».- Կարծում է Ազատամարտիկների Դաշինքը

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանի որոշմամբ՝ երկու ամսով կալանաւորուեցին Նորք թաղամասում վնասագերծուած խմբի գործով օրերս ձերբակալուած՝ «Հայրենիք եւ Պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեանը եւ «Եղուարդի Մարգարեանի Ֆաբրիկա» ընկերութեան հիմնական բաժնետէր, ազատամարտիկ Վլադիմիր Առաքելեանը:

Ըստ ԱԱԾ-ի, նրանք երկուսն էլ մեղադրուած են «Արթուր Վարդանեանի կողմից ստեղծուած յանցաւոր համագործակցութեանը մասնակցելու, կազմակերպուած խմբի կազմում գէնք եւ ռազմամթերք իրացնելու, պահելու» մէջ: Թէ՛ Գառնիկ Մարգարեանը, թէ՛ «Տիգրան Մեծ» շոկատի հրամանատար Վլադիմիր Առաքելեանը հերքում են իրենց առնչութիւնը գիտուած խմբաւորմանը:

Միւս կողմէ, «Ազատամարտիկների Դաշինքի» վարչութիւնը յայտարարեց, որ այսպէս կոչուած «բանդայի գործի» շրջանակներում, տեղի ունեցած ձերբակալութիւնները, հիմնականում ուղղուած են, ինչպէս ընդդիմադիր քաղաքական ուժերին, այնպէս էլ ներկայիս իշխանութիւնների վարած սխալ կամ ազգազաւ քաղաքակա-

նութեան դէմ ըմբոստացող ազատամարտիկների դէմ:

Յայտարարութիւնում նաեւ ասուած է. «Այս գործելաձեռն աւելի շատ նման է պետական դատական տեւորի: Իրադարձութիւնների զարգացման այս սցենարը ենթադրել է տալիս, որ իշխանութիւնները հետապնդում են պետական ու ազգային շահերին հակասող որոշումներ կայացնելու հեռահար նպատակներ, այդ պատճառով հիմնական թիրախ են ընտրել այդ որոշումներին հնարաւոր դիմադրութիւն ցոյց տալու կարող ուժերին:

Հաշուի առնելով այս իրականութիւնը ԱԴ-ն գտնուած է, որ նոյնիսկ, եթէ «բանդայի» գործունէութեան փաստը իրականութիւն է, ապա դրա հիմնական մեղքն ընկնում է իշխանութիւնների վրայ, որպէս հետեւանք նրանց վերջին տարիներ Վարած ապաշնորհ, աւելին՝ յանցաւոր թէ՛ արտաքին, եւ թէ՛ յատկապէս ներքին քաղաքականութեան, ինչպէս նաեւ երկրին պարտադրած բարոյա-հոգեբանական մթնոլորտին:

ԱԴ-ն կոչ է անում իշխանութիւններին գերծ մնալ իրադարձութիւնների հետագայ սրացումից, գործելու բացառապէս օրէնքի եւ օրինականութեան շրջանակներում եւ սթափ գնահատելու երկրի ներսում առկա իրավիճակը:

«Արա Արահամեանը Թոյնքածել Յաջողութեան Քիչ Շանսեր Ունի»

Ռուսաստանի Հայերի Միութեան ղեկավար Արա Աբրահամեանը Հայաստանի ներքաղաքական կեանքում թուխքածել յաջողութեան քիչ շանսեր ունի: Այս մասին Յունուարի 18-ին լրագրողներին յայտնել է քաղաքագէտ, միջազգային ու անվտանգութեան հարցերով հայկական ինստիտուտի տնօրէն Ստեփան Սաֆարեանը:

Փորձագէտի խօսքով, եթէ նրան համեմատենք Գաղիկ Ծառուկեանի հետ, ապա Ծառուկեանի մօտ բարերարի ֆենտմէնը տարիներով էր ձեւաւորուել: Իսկ Աբրահամեանի մօտ այն թելադրուած կլինի տուեալ պահով, եւ կողքից դա բացայայտ կերեւալ: Այն դիտարկմանը, որ Աբրահամեանը, որը բիզնես ունի Ռուսաստանում, Հայաստանի իշխանութիւնների վարչական լծակներից կախում չի ունենայ, ինչպէս Ծառուկեանը, Սաֆարեանը առարկեց. «Հասարակութեան աչքերում Աբրահամեանը ռուսամէտ

նախագծի պատանդը կը լինի»:

Սաֆարեանի կարծիքով, Հայաստանում ընդդիմութեան ու ընդհանուր քաղաքականութեան մէջ զաղափարներին աղքատութիւն է նկատուած: Նախկին առաջնորդների համար դժուար է հասարակութեան վստահութիւնը վերականգնելը: Իսկ եթէ խօսենք նորերի մասին՝ ապա «Լուսաւոր Հայաստան» ու «Քաղաքացիական Պայմանագիրը» հենց թիմային ուժին են ապաւինում: Բայց առաջինը վառ արտայայտուած առաջնորդ չունի, դրա համար էլ նրանց պէտք է շատ լաւ թիմ հաւաքել, ու այդ ուղղութեամբ իրականացուող աշխատանքները երեւում են: Ինչ վերաբերում է «Քաղաքացիական Պայմանագիրին», ապա Նիկոլ Փաշինեանը օժտուած է խարիզմայով, բայց խնդիրն այն է, որ նրան անընդհատ յիշեցնում են Հայ Ազգային Կոնկրէտի հետ նրա նախկին քաղաքական կապերը:

Դաշնակցութիւնը Բանակցում է Կոալիցիա Մտնելու

Դաշնակցութեան մուրազը, կարծես թէ, կատարուած է. վերջին օրերին մամուլում սկսել են առաւել ակտիւ շրջանառուել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Հանրապետական Կուսակցութեան միջեւ կոալիցիոն իշխանութեան ձեւաւորման շուրջ բանակցութիւնների մասին տեղեկութիւնները: Ըստ մամուլում տարածուած լուրերի՝ ապագայ կոալիցիայի ձեւաչափը հանրապետականների եւ ՀՅԴ ներկայացուցիչների միջեւ այս օրերին քննարկուած է ամենատարբեր մակարդակների հանդիպումներում:

ԲՀԿ-ն եւ ՀՅԴ-ն տակաւին վերջերս կտրականապէս հերքում էին իշխանութեան հետ կոալիցիա կազմելու հնարաւորութեան մասին բոլոր խօսակցութիւնները, իսկ այսօր արդէն «Ազատութեան» հետ հարցազրոյցում ՀՅԴ բիւրօյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը նշել է, որ եղել է կոալիցիայի առաջարկութիւն, որը ՀՅԴ-ն սկզբունքորէն ընդունել է, եւ այդ հարցի շուրջ երկու օր առաջ բանակցութիւններ են ունեցել Հանրապետութեան նախագահ եւ իշխող կուսակցութեան ղեկավար Սերժ Սարգսեանի հետ:

Զուրաբեան.- «Հանրաքուէից Յետոյ Հայաստանում Սերժ Սարգսեանի Իշխանութիւնը Թուլացել է

Սահմանադրական փոփոխութիւնների վերաբերեալ հանրաքուէից յետոյ Հայաստանում Սերժ Սարգսեանի իշխանութիւնը զգալիօրէն թուլացել է: Այդ մասին Յունուարի 18-ի մամուլի ասուլիսին յայտնել է ԵՆԽՎ-ում հայաստանեան պատուիրակութեան անդամ, Հայ Ազգային Կոնկրէտի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

Մինչեւ հանրաքուէն, պատգամաւորի խօսքով, Սերժ Սարգսեանն ընտրութեան առաջ էր կանգնած. կամ կորցնել իշխանութիւնը, կամ կառավարման խորհրդարանական ձեւի անցնելով՝ պահպանել այն, բայց արդէն թուլացած: «Եթէ Սերժ Սարգսեանը հնարաւորութիւն ունենար պահպանելու նախագահական կառավարումը եւ այդ համակարգում իր անձնական իշխանութիւնը, նա երբեք հանրաքուէի չէր գնաց: Նա գնացել է իր իշխանութիւնը թուլացած տարբերակով պահպանելու

ուղիով: Նրան անհրաժեշտ էր անձանց բաց անել իր իշխանութեան ուղին եւ երկրորդ՝ վերահսկող ընդդիմութիւն ստեղծել եւ յաղթել 2017-ի խորհրդարանական ընտրութիւններին՝ շնորհաւորանքներ ստանալ այդ վերահսկող ընդդիմութիւնից», - նշել է Զուրաբեանը:

Ընտրական օրէնսդրքի մշակման համատեքստում Սերժ Սարգսեանն իր համար բարդ իրավիճակ է ստեղծել: «Մենք 4 հիմնական սկզբունք ենք ներկայացրել Ընտրական օրէնսդրքում ներառելու համար, եթէ ուզում ենք ազատ եւ արդար ընտրութիւններ կատարել», - ասել է Զուրաբեանը: Նա նաեւ յաւելել է, որ Ընտրական օրէնսդրքը պիտի դրոյթներ ներառի ամէն ընտրատեղամասում վեբ տեսախցիկներ տեղադրելու եւ առցանց հեռարձակման մասին, որպէսզի ցանկացած քաղաքացի տեսնի, թէ ինչ է կատարուած ընտրական տեղամասում:

Լեւոն Տէր-Պետրոսեանի Հիւանդութիւնը Լուրջ է, Բայց Բուժելի

Հայաստանի առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը հիւանդ է, խնդիրը լուրջ է, բայց հիւանդութիւնը բուժելի է: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

Նրա խօսքով, խնդրով համապատասխան բժշկները գտնուած են, որոնք զբաղուած են այդ հարցով: Հարցին, թէ ճիշդ է խօսակցութիւնները, որ առաջին նախագահի մօտ քաղցկեղ է ախտորոշ-

ուել, Զուրաբեանը պատասխանեց. «Ես չեմ կարող այստեղ խօսել կոնկրետ դիագնոզի մասին»:

ՀՀ նախկին նախագահ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը Յունուարի 13-ին մեկնել է ԱՄՆ՝ բուժման նպատակով, ինչի վերաբերեալ Յունուարի 8-ին քննարկում է ունեցել ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլիսի հետ: «Իրաւունք» թերթի փոխանցմամբ, Լ. Տէր-Պետրոսեանի մօտ ենթաստամոքսային գեղձի սրացման խնդիր է ի յայտ եկել:

Խաչատուր Սուքիասեանն Առաջարկում է Ներողութիւն Խնդրել Ու Զեռանալ

Աժ նախկին պատգամաւոր Խաչատուր Սուքիասեանը դեռ չի որոշել վերադառնալու է քաղաքականութիւն, թէ՛ շարունակելու է միայն բիզնեսով զբաղուել:

«Կը նայենք դաշտը, կը հասկանանք: Եթէ օրինականութիւնների ցանկութիւն կայ, որ առաւել օրինական, օրէնքով սահմանուած կարգով ամէն ինչ լինի, դա առաւել հնարաւորութիւն է տալիս, որ ցանկանաս գնալ: Յետոյ պէտք է նայենք, թէ քաղաքական դաշտում խաղացողները ովքե՞ր են: Վերջին հաշուով, ես կարծում եմ, որ որոշակի սերնդափոխութիւն է պէտք անել, որոշակի նոր կարգավիճակ, նոր վիճակ, նոր խումբ, նոր պատկերացում, նոր առաջարկ, նոր պահանջ», - լրագրողների հետ զրոյցում ասաց Խաչատուր Սուքիասեանը:

Խաչատուր Սուքիասեանի խօսքերով՝ արդէն 25 տարի է ընդհանուր դաշտը հնացած է «Այս մայրից այն մայրի են թուլում, այն մայրից այս մայրի են թուլում, սա նոյնպէս պէտք է կարգաւորուի, կարծում եմ՝ ժամանակն է ստանդարտներ դնել, պահանջներ»:

«Սիլ գրուպ» կոնցենի սեփականատէրը կարծում է, որ արեւմտեան չափորոշիչներով պէտք է առաջնորդուել, երբ ցանկացած քաղաքական գործիչ, կուսակցութեան ղեկավար, տարիների ըն-



Աժ նախկին պատգամաւոր Խաչատուր Սուքիասեան

թացքում գլոբալ սխալ է կատարում, կանգնում է ամբիոնի մօտ, ներողութիւն է խնդրում ու հեռանում է քաղաքական դաշտից:

«Հայաստանում ինչ ուզում է լինի, ուզում է օդ թռչի, կոսմոսից ամենավատ գործողութիւնները կատարի, ասում են ի՞նչ է եղել որ, այդպիսի բան չկայ: Հիմա նշանակում է, որ մեր հասարակութիւնն է պասիւ, եւ այդ պահանջը հասարակութիւնը պէտք է դնի», - ասում է գործարարը:

Նա նշում է, որ ինքը եւս հիասթափութիւն է ապրել. «Ոնց կարող է հիասթափութիւն չլինի, անօրինական ամէն ինչ արւում է, ի՞նչ չի արւում, բոլորը գիտե՞ք»:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանը Ողջունում է Իրանի Նկատմամբ Պատժամիջոցների Վերացումը

ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանը հանդես է եկել Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացման վերաբերեալ յայտարարություններով:

Հայաստանի ԱԳՆ մամուլի ծառայությունից NEWS.am-ին յայտնում են, որ յայտարարությունն մէջ ասում է.

«Ողջունում ենք Իրանի միջուկային ծրագրի վերաբերեալ պայմանաւորուածութիւնների իրականացման մեկնարկը, Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացումը:

Հայաստանը շահագրգռուած է խորացնել փոխշահաւէտ համագործակցութիւնը բարեկամ Իրանի հետ»:

Հայաստանը Դիմել է Ռուսաստանին՝ Գազի Սակագնի Նուազեցման Խնդրանքով

Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեանը ընդունել է կենցաղային ապրանքների եւ սննդամթերքի արտադրութեամբ ու արտահանմամբ զբաղուող մի շարք տնտեսվարողներին՝ իրենց խնդրանքով: Հանդիպմանը ներկայ են եղել նաեւ կառավարութեան տնտեսական բլոկը ներկայացնող գերատեսչութիւնների ղեկավարները:

Հայրենական արտադրողները ներկայացրել են իրենց մտահոգութիւնները՝ տեղական արտադրանքի մրցունակութեան եւ աշխատատեղերի պահպանման վրայ էներգակիրների գների բացասական ազդեցութեան վերաբերեալ: Գործարարները խնդրել են վարչապետին՝ ելնելով էներգակիրների գների համաշխարհային դինամիկայից, ԵՏՄ անդամակցութեան շրջանակներում դիմել Հայաստանի Հանրապետութեան ռազմավարական գործընկեր Ռուսաստանի Դաշնութեանը՝ ներմուծող գազի սակագնի նուազեցման եւ արտադրողների համար ազգային արժոյթով գնադրացման խնդրանքով: Գործարարները ներկայացրել են նաեւ իրենց ծրագրերը, հնարաւորութիւններն ու դիտարկումներն աշխատատեղերի պահպանման եւ արտահանման վերաբերեալ:

ման խթանման վերաբերեալ:

Վարչապետ Աբրահամեանն անխոչըտք է համարել որեւէ աշխատատեղի կրճատումը: Նրա խօսքով՝ կառավարութիւնը պատրաստ է տարբեր գործիքներով աջակցել մեր արտադրողներին՝ աշխատատեղերի պահպանման եւ ձեռնարկութիւնների զարգացմանը նպաստելու համար: Վարչապետն ընդգծել է որ Ռուսաստանի Դաշնութեան եւ այլ գործընկերների հետ տնտեսական յարաբերութիւնների առաջընթացն էսպէս կախուած է տնտեսական մրցունակութիւնը չհասնողներին քակիւրների գներից եւ նշել է, որ էներգակիրների հարցով ՀՀ իշխանութիւնները դիմել են Ռուսաստանի Դաշնութեան իշխանութիւններին եւ հաշուի առնելով Ռուսաստանի Դաշնութեան հետ մեր գործընկերութեան ռազմավարական բնոյթը, ակնկալում ենք ստանալ հարցի զրական լուծում:

Յովիկ Աբրահամեանը տեղեկացրել է, որ հանդիպման ընթացքում էներգացումը բոլոր առաջարկութիւնները կը քննարկուեն կառավարութիւնում եւ դրանց հիման վրայ կը մշակուեն տնտեսվարողներին աջակցութեան նոր քայլեր եւ ուղիներ:

Պաքուի Ջարդերի 26-րդ Տարելիցին Նուիրուած Միջոցառում Պաթումում



Պաթումի Սուրբ Փրկիչ եկեղեցում Յունուարի 17-ին անցկացուեց 1990թ. Յունուարին Պաքուում տեղի ունեցած հայկական ջարդերի 26-րդ տարելիցին նուիրուած միջոցառում, որը վարեց ղարահայութեան հոգեւոր հովիւ Արարատ քահանայ Գումբալեանը:

Պաթումում ՀՀ գլխաւոր հիւպատոս Արամ Գրիգորեանն իր խօսքում շեշտեց, որ Պաքուի, Կիրովաբադի, Շամխորի, Մարաղայի

դէպքերը 20-րդ դարում տեղի ունեցած եղեռնագործութիւնները, ինչպէս նաեւ 1988թ.-ի սոււձայիթեան ջարդերը մոռացութեան մատնելու եւ մեղաւորների անպատժելիութեան անմիջական հետեւանքն էին:

Միջոցառման վերջում, ներկաները ծաղիկներ զետեղեցին Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի յիշատակին կանգնեցուած խաչքարի առջեւ:

Հռոմի Պապը Հնարաւոր է Այս Տարի Այցելի Հայաստան

Հռոմի Պապ Ֆրանցիսկոսը հնարաւոր է այս տարուայ ընթացքում այցելի Հայաստան: Այդ մասին հաղորդում է «Catholic News» գործակալութիւնը:

Յաղորդագրութիւնում նշուած է, որ Հռոմի Պապի 2016 թուականի արտասահմանեան այցելութիւնների գրաֆիկում երկու լրացուցիչ այց է աւելանալու, որոնցից մէկը հաւանաբար Հայաստանն է:

Պապի այցելութիւնները, ընդունելութիւնները ծրագրող բաժնի հրապարակած 2016 թուականի առաջին կիսամեակի գրաֆիկում Ֆրանցիսկոսը Մայիսին եւ Յունիսին մի քանի ազատ օր է ունենալու, ինչը ենթադրել է տալիս, որ նա կարող է լրացուցիչ երկու այցելութիւններ կատարել:

Հայաստան այցելի կոնկրետ պլանաւորուած գրաֆիկ չկայ, դա պաշտօնապէս հաստատող որեւէ տեղեկատուութիւն չկայ, սակայն «Catholic News» գործակալութիւնը հաղորդում է, որ ըստ իրենց աղբիւրների՝ Ֆրանցիսկոս պապն, ամենայն հաւանականութեամբ, 2016 թուականի ընթացքում այցելելու է Հայաստան:

Գործակալութիւնը յիշեցնում է նաեւ, որ անցեալ տարի Սեպտեմբերին կարդինալ Լեոնարդո Սանդրին, երբ Հայաստանում էր, ասել է, թէ Պապը ցանկանում է այցելել Հայաստան:

Ֆրանցիսկոս Պապը նոյնպէս 2014 թուականի Նոյեմբերին ասել էր, որ Հայ եկեղեցու երեք պատրիարքներին խոստացել է այցելել



Հռոմի Պապ Ֆրանցիսկոս

Հայաստան: «Ես չգիտեմ՝ արդեօք դա հնարաւոր կը լինի, բայց ես խօսք եմ տուել», - նշել էր նա:

Գործակալութիւնը հնարաւոր է համարում, որ այցելութիւնը տեղի ունենայ Յունիսին. Յունիսի 22-26-ը Հռոմի պապի գրաֆիկում չորս ազատ օր կայ, եւ հնարաւոր է դա օգտագործուի Հայաստան այցելելու համար:

Իսկ այս պահի դրութեամբ Հռոմի Պապի արտասահմանեան երկու այցելութիւն կայ հաստատուած՝ Փետրուարի 12-18-ը Ֆրանցիսկոս Պապի այցելելու է Մեքսիկա, իսկ Յունիսի վերջերին՝ Լեհաստան՝ մասնակցելու Երիտասարդութեան միջազգային օրուայ միջոցառումներին, որոնք անցկացուելու են Յունիսի 26-31-ը:

«Ինչ-Որ Մի Ձեռք Մեր Երկիրը Անընդհատ Քանդում է, Դարձել Ենք Փորձադաշտ Ասում Ե Գրականագէտ Դաւիթ Գասպարեանը

«Ձուարթնոց» օդանաւակայանի հին մասնաշէնքը վերջին շրջանի ճարտարապետութեան լաւագոյն կոթողներից մէկն է, մնայուն արժէք, որը դարձել է Հայաստանի դէմքը. լրագրողների հետ հանդիպման ժամանակ, խօսելով «Ձուարթնոցի» հին մասնաշէնքը քանդելու որոշման մասին, ասաց գրականագէտ Դաւիթ Գասպարեանը:



Երեւանի «Ձուարթնոց» օդանաւակայանի հին մասնաշէնքը

«Վերջ տուէք այդ քանդելուն, բաւական է քանդել, աւերել: Քանդեցիք երիտասարդական պալատը, ինչ դրեցիք դրա փոխարէն: Տարիներ շարունակ նախագծեր են քննարկուած, որը չկայ», - յայտարարեց նա:

Գրականագէտն առաջարկում է ընդվզման մեծ ալիք սկսել սրա դէմ.

«Ինչ-որ մի ձեռք մեր երկիրը անընդհատ քանդում է, կարծես դարձել ենք փորձադաշտ: Ինչ փորձ ասես՝ դրեցին մեզ վրայ: Դրա համար պէտք է ամուր լինենք, դիմակայենք եւ մեր կարողացածի չափով թոյլ չտանք այդ աւերումները»:

Ասուլիսին ներկայ՝ ճարտարապետ Ֆերիդինանտ Առաքելեանը նոյնպէս կարծում է, որ պէտք է ձեռք տալ «Ձուարթնոց» օդանաւակայանի հին շէնքին. նա յիշում

է, թէ ինչպէս է այն գծագրուել ու կառուցուել.

«Որովհետեւ այդ շէնքի հեղինակները իմ մտերիմ ընկերներն էին, որոնք արդէն կենդանի չեն: Աշխարհում չկայ քանդելով կառուցել, կայ կառուցելով կառուցել: «Ձուարթնոցի» հին շէնքը գեղեցիկ է սարքուած, կարելի է փոխել, ամրացնել, բայց քանդել՝ ուղղակի համարելով, թէ այն կոնստրուկտիւ չի արդարացնում:

Ճարտարապետը դիմեց էդուարդ Էդնեկեանին, ով հանդիսանում է «Ձուարթնոց» օդանաւակայանի հին մասնաշէնքի սեփականատէրը՝ ինդերելով չքանդել այն. «Խնդրում եմ հենց իրեն՝ էդնեկեանին, գտնել ուրիշ տարբերակ, որ ձեռք չտան այդ կառուցիչին: Ժողովուրդը սիրում է այդ կառուցիչը: Եթէ սիրում է, ուրեմն՝ ձեռք տալ չի կարելի»:

Կ. ՓԱՅԼԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՉ ԸՐԱԾ Է ԴԱԴԻԵՑՆԵԼՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՆՇՈՒՄՆԵՐԸ ԱՆՁՆԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՄԵՋ



Թուրքիոյ քրտական ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլան երկրի խորհրդարանին մէջ կոչ ըրած է դադրեցնելու անձնագիրներուն մէջ կիրարկել ազգային ու կրօնական պատկանելութեան մասին նշումները (code):

Ըստ թրքական Demokrat Haber կայքին՝ Կարօ Փայլան խորհրդարանին մէջ պատմած է, թէ մանկութենէն միշտ ենթարկուած է

կրօնական խտրականութեան պետական մարմիններու հետ շփումներու ընթացքին:

«Փոքր տարիքէն սկսած, երբ որեւէ պետական կառույց կ'երթայի ու հոն իմ անձնագիրիս մէջ կը տեսնէին, որ քրիստոնեայ եմ, կը սկսէին խտրականութիւն ցուցաբերել», - ըսած է Կարօ Փայլան՝ կոչ ընելով իշխանութիւններուն դադրեցնելու ազգային ու կրօնական պատկանելութեան նշումները անձնագիրներուն մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻԸ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ՊԻՏԻ ՅՐԱՊԱՐԱԿԷ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐՈՒ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ



Ազգային արխիւի տնօրէն Ամատունի Վիրաբեան

Հայաստանի Ազգային արխիւը կը նախատեսէ հրապարակել թուրքիոյ հայկական վանքերու կալուածքներուն մասին փաստաթուղթեր: Այս մասին «Արմենփրես»-ի մամուլի սրահին մէջ հրաւիրուած ասուլիսին ժամանակ տեղեկացուցած է Ազգային արխիւի տնօրէն Ամատունի Վիրաբեան:

«Այսօր շատ է խօսուած թուրքիայի հայկական եկեղեցիների կալուածքի մասին: Գիտենք, որ Միսի կաթողիկոսարանը կալուածքները վերադարձնելու նպատակով դատական գործընթացի մէջ է: 2016 թուականին կը հրապարակուի գիրք, որտեղ կը ներկայացուեն թուրքիայում առկայ բոլոր վանքերի կալուածքների մասին տեղեկատուութիւն: Դա բաւական արժէքաւոր տեղեկատուութիւն է: Մենք ներկայացնելու ենք հէնց թուրքական իշխանութիւնների կողմից տրուած փաստաթղթերը՝ օսմաներէնով գրուած», - ըսած է Ամատունի Վիրաբեան: Այդ

գիրքը պիտի ըլլայ հայերէն եւ օսմաներէն:

Ամատունի Վիրաբեան տեղեկացուցած է, որ իրենք կ'աշխատին ու կը համագործակցին այլ երկիրներու Ազգային արխիւներու հետ: Կ'աշխատին Իտալիոյ, Ֆրանսայի, Իրանի, Վրաստանի, Ռուսիոյ, Սերպիոյ, Լեհաստանի եւ այլ երկիրներու Ազգային արխիւներու հետ: Ռուսիոյ հետ համագործակցութեան արդիւնքով այս տարի պիտի հրատարակուի «Կովկասեան ռազմաճակատ. 1914-1918 թթ.» ժողովածուն, որ պիտի ներառէ տարածաշրջանի բնակչութեան, Հայոց ցեղասպանութեան մասին նիւթեր: Գիրքին մէջ տեղ պիտի գտնեն ռազմական հետախուզութեան նիւթեր, որոնք կը պատմեն թրքական իշխանութիւններու գործողութիւններուն մասին, թէ ինչպէս հայերը արտաքսած են, ոչնչացուցած, ճանապարհներուն հայերուն վրայ յարձակումներ կազմակերպած:

Իրաքեան Քիւրտիստանի Մէջ Ապրող Հայերը Զէնքով Կը Պաշտպանեն Իրենց Տունը



Վերջին շրջանին գրեթէ ոչ մէկ տեղեկութիւն կայ իրաքեան Քիւրտիստանի այն շրջանէն, ուր հայեր կը բնակին: Այդ շրջանի մէջ ապրող հայերու մասին հատուկ նշան տեղեկութիւններ կը հրապարակեն իրաքի լրատուական միջոցները, երբեմն ալ Քիւրտիստանի տեղական հեռուստատեսիւնները, որոնք սակայն չաճախ հասանելի չեն Հայաստանի հայերուն եւ ընդհանրապէս սփիւռքահայերուն: Հասանելի չըլլալը ամենեւին չի նշանակեր, որ այլեւս այնտեղ հայեր չեն ապրիր, իրաքի հայերը տակաւին կը շարունակեն ապրիլ Տհոք քաղաքի մօտ գտնուող իրենց գիւղերէն՝ Ավզրուք, Հավրէսք, Իսքանտեր: «Մենք՝ հայերս, յայտնի ենք մեր խելացութեամբ եւ քաջութեամբ: Իրաքի Քիւրտիստանի պետական առաջնորդներն ու քիւրտերը շատ կը յարգեն մեզ: Մենք արծիւներու ու առիւծներու հետ մեծցած հայեր ենք: Եթէ պէտք ըլլայ, մենք պատրաստ ենք մեր կենքի գնով պայքարիլ, առիւծի նմամբ» ըսած է իրաքի Քիւրտիստանի բնակիչ Մուրատը, աւելցնելով, «Մենք Հայաստանի օգնութեան կը հասնինք, եթէ Հայաստանի վրայ յարձակում ըլլայ, անկախ, թէ ովքեր կ'ըլլան յարձակողները»:

Դժուար ու վտանգաւոր ուղին, մինչ հազարաւոր այլ իրաքցիներ ու քիւրտեր փախած են երկրէն՝ ճամբան թողելով նոյնիսկ իրենց մօտ գտնուած հրազէնք:

Պանդուխտ կը պատմէ նաեւ, որ Մուրատը հայկական Ավզրուք, Հավրէսք եւ Իսկենտեր գիւղերու աւագն է: Անոնք մեծ գիւղեր են, ուր եկեղեցիներ կան եւ կը գործէ կիրակնօրեայ հայկական դպրոց (Ավզրուքի մէջ): Հոն բնակող հայերը բոլորը Հայոց ցեղասպանութենէն փրկուածներն են սերունդներն են:

Մուրատի ենթակալութեան տակ գտնուողներու միակ խնդիրը հայկական համայնքի հանգստութիւնն ու անվտանգութիւնը ապահովելն է, քանի որ այդ տարածաշրջանին մէջ անոնք կը գտնուին մշտական վտանգի տակ, եւ բացի սեփական ուժերէն, հայերուն որեւէ մէկը չի պաշտպաներ ճիհատիստներու յարձակումներէն: Հարկ է նշել, որ հայերը լաւ յարաբերութիւններ ունին պարզանիստներու հետ: Ուրիշ ելք չունին, որովհետեւ անոնք են այդ տարածքներու տէրերը, եւ իրաքի դեկալարութիւնը որեւէ ազդեցութիւն չունի այդտեղ:

Իրաքի մէջ հայ համայնքի անդամներու ընդհանուր թիւը կը ճատուած է: Տարածաշրջանի կենդրոնական հատուածներուն մէջ բնակող ընտանիքները, որոնք հարստութիւն դիզած են Սատամ Հիւսայնի կառավարման օրօք, անոր մահէն ետք մեկնած են Եւրոպա եւ Ամերիկա: Միւսները օգտուելով տարբեր միջազգային ծրագրերէ ու հիմնադրամներէ, հաստատուած են այլ վայրերու, օրինակ, Հայաստանի մէջ:

Իսկ անոնք, որոնք կը բնակին իրաքի Քիւրտիստանի բաժինը, որոշած են պայքարիլ «Իսլամական պետութեան» սեւ ուժերուն դէմ: «Արեւելք»

Սուրիահայութեան Ի Նպաստ Թելթոնը

Շարունակուած էջ 1-էն

Թիւնը թելթոնին ու կատարեն իրենց ազգային պարտականութիւնը՝ Սուրիոյ մէջ տիրող այս դժուարին օրերուն:

Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմինը (SARF) կը յայտարարէ հանրային հաւաք նուիրուած Սուրիահայութեան օժանդակելու թելթոնին: ՍԱՐՖը կը յայտարարէ, թէ Կիրակի Յունուար 24, 2016 յաւարտ Սրբ. պատարագի, տեղի պիտի ունենայ հանրային հաւաք

Սրբ. Պետրոս Հայց. Առաքելական եկեղեցւոյ շրջաբակին մէջ, 17231 Sherman way, Van Nuys, CA 91406:

Հաւաքի նպատակն է աւելիով իրազեկել մեր գաղութը անողոք պատերազմին հետեւանքով Սուրիահայութեան դժնդակ կացութեան մասին, եւ Կիրակի Փետրուար 21, 2016 թ. տեղի ունենալիք թելթոնին միջոցաւ Սուրիահայութեան անսակարկ կերպով օգնելու անհրաժեշտութեան եւ կենսականութեան մասին:

Յաւելեալ տեղեկութեանց համար դիմել SARF-ին (818) 646-1166 կամ office@sarftelethon.org:

Կ Տ Ա Կ Ը (ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻԻ ՆԱՅԱՏԱԿՈՒԹԵԱՆ 87-ՐԴ ԱՄԵԱԿ)

87 տարիներ մեզ կը բաժնեն այն անարգ միջադեպին, երբ Պէջրութի նեղլիկ գոհիհներէն միոյն անկիւնը եղբայրասպան զնդակի գոհ կը դառնար ընկ. Սարգիս Տիրունին: Անոր դիտապաստ տապալումով վերջակէտ կը դրուէր պայքարով լեցուն կեանքի մը՝ որ այնքան խոստումնալից եւ տեսլապաշտ հորիզոններ կ'ուրուագծէր ազգային-զաղափարական-հասարակական ոլորտներու մէջ:



Բոլոր մահկանացուներս ժամանակաւոր հիւրեր ենք Երկիր մոլորակին վրայ անխուսափելիօրէն. սակայն ոմանք իրենց ետին կը թողուն կտակ մը՝ սերունդներ ոգեւորող, դաստիարակող եւ լիցքաւորող: Այդ կտակը բարոյապէս գինող, պնդացնող այն կուռանն է, որուն կ'ապաւինինք յաճախ՝ ուղենշելու մեր սկզբունքները, գաղափարախօսական դրոյթներն ու դաւանանքը:

Ընկեր Սարգիս Տիրունին արհնչուելի ինկաւ, որովհետեւ իր կեանքն ու գործը, խօսքն ու գրիչը վերածած էր կտակի եւ ժամանակակիցներուն եւ յետնորդներուն համար: Հետեւելով անոր կարճատեւ, բայց իմաստալից կեանքի ուղեծիրին, իւրացնելով անոր վեհ սկզբունքներն ու համոզումները, հեշտութեամբ կ'ընդնշմարենք թէ ան նուաճեց անմահութեան իրաւունքը իր այնքան թելադրիչ կտակով:

Արդարեւ՝ ո՞րն է այդ կտակը. ի հարկէ՝ ՊԱՅՔԱՐԻ ՅԱՆԴՊՆՈՒԹԻՒՆԸ պարզապէս:

Ան անած, ուռճացած եւ կազմաւորուած ըլլալով Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան գաղափարական դարբնոցին մէջ, մինչեւ ողն ու ծուծը որդեգրելով կուսակցութեան հաւատացած սկզբունքները, հաւատալով անոր ազգային-գաղափարական երթին ու նպատակներուն, բոլորանուէր ինքնանուիրումով նետուեցաւ պայքարի մարտադաշտ՝ Կիլիկիայէն մինչեւ Սուրիա եւ Լիբանան. առանց սպոժեղութեան ամենաթէժ պատնէշներուն վրայ՝ աքորէ մինչեւ գնտան, հալածանքէ մինչեւ բեմ, մամուլ ու վարժարան, կուսակցական յանձնառութիւններէ մինչեւ հակա-գաղութատիրական պայքար. որմէ ետք՝ նահատակութիւն...:

Համամարդկային արժէքները առաջնահերթութիւններ էին անոր համար: Որպէս իսկական ընկերվա-

րական չսահմանափակուեցաւ նեղ-ազգայնական շրջանակով: Արաբ ժողովուրդին ազատագրական պայքարը համարեց իրը նաեւ: Անոր համար ճակատագրակից ազգերու միասնականութիւնը ազատութեան համելու գործնական ճանապարհն էր անվարան: Ահա թէ ինչու ֆրանսական իշխանութիւնները գինք աքորեցին Արուստ կղզի: Ան հաւատաց համըղհանուր արդարութեան՝ այդպիսով փշրելով մեկուսացած ապրելու կրաւորական վարքագիծը: Ինչ օգտաւէտ եւ ուսանելի ընթացք էր միասնական գոյարի ուղին՝ երբ բռնակալութիւններ խտիր չեն դնէր ազգերու միջեւ:

Անշահախնդիր հայրենասիրութիւնը անվիճարկելի էութիւնն էր Ս. Տիրունիին: Հայրենիքին գոյութիւնը, անոր գորակցութիւնը, գաղթահալութիւնը անով ջերմացնելու գիտակցութիւնը եղան գրաւականներ անոր հասարակական գործունէութեան: Կիլիկիոյ մէջ ասոնք էին իր պայքարին սկզբունքները, նոյնը մնացին յետագային եւ ընդմիշտ: «Հոն, Արարատի փէշերուն պիտի գարնենք մեր վրանները» կարգախօսը Ս. Տիրունին արձակեց՝ հաւատալով որ հայրենիքը ինչպիսի պայմաններու մէջ ալ ըլլայ լուսաւոր փարոսն է ողջ հայութեան. պիտի մնայ այդպիսին՝ յաջորդական սերունդներուն համար եւս: Այդ օրերուն հայրենիքին հանդէպ ամէն սեւացրէքեան քայլ, գաղափարախօսական շիլ քննադատութիւններ, անհեթեթ վերապահութիւններ Ս. Տիրունիին կողմէ արժանացան դիպուկ հակահարուածներու, քանզի կարելի չէ սակարկել հայրենիքին



կարեւորութեան փաստը: Այո, բացասական կողմեր կային, բայց գանոնք շահարկել հայրենիքի գոյութեան դէմ՝ պարզապէս բարեւի էր եւ անընդունելի: Ուրեմն՝ Ս. Տիրունին ինքնին դպրոցն էր մաքրամաքուր հայրենասիրութեան:

Կուսակցականութիւնը փոքր տարիքէն լիովին ըմբռնած եւ անոր հետեւած Ս. Տիրունիին համար կարգապահութեան, գաղափարականութեան եւ գործունէութեան ամենա բեղուն ասպարէզն էր այդ: Ընկրկումի պահերուն թէ անճրկումի ժամանակ նշանախեց մ'անգամ չգիջեցաւ ան իր գաղափարական շաւղէն: Ինչ հազուադէպ երեւոյթ է այս, յատկապէս մեր օրերուն, երբ պատեհապաշտութիւնը, լարախաղացութիւնն ու առնչտավազը մարդիկ վերածած են արհեստի եւ արուեստի: Գաղափարական մարդը կարելի նման կանգնած, միշտ ալ արժանի է պատուի ու յարգանքի:

Դաժան կեանքի բովէն քաջաբար քայլած, զրկանքի եւ հալածանքի տատասկոտ արահետէն սէզ ճակատով ընթացած մեծ դաստիարակ Ս. Տիրունին մինչեւ իր ֆիզիք ական մահը մնաց հաւատարիմ Հնչակեան: Այդ պատճառով Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան երիտասարդական միաւորները կոչուեցան ի պատիւ անոր: Տիրունիականութիւնը անոր առաքելութիւնը շարունակող անդամաշարքն է, որ ոչ միայն կը

հաւատայ անոր կտակին, այլ՝ կը մնայ կառչած անոր ոգիին ու տառին:

Ժամանակներու փոփոխութեանց հետ կը փոխուին նաեւ բարքերը: Ս. Տիրունիի նահատակութենէն 87 տարիներ ետք կը տեսնենք ու կ'ապրինք համամարդկային, ընկերային եւ ազգային արժէքներու այնպիսի անկուսներ, էժան սակարկութիւններ, ճղճիմութիւններ եւ լարծուն նկարագիրներ, որոնք կ'ապշեցնեն բոլորս: Գաղափարի ինչպիսի տիրտաններ ուղի հարթեցին պատմութեան թաւալքին, կեանքի գնով ոգի եւ աւիշ փոխանցեցին չորսդին, իսկ այսօր նման սկզբունքներ ու արժէքներ նսեմացած են նիւթին եւ կեղծ փառքերու դիմաց: Ափսոս որ խեղուած են բարքերն ու չափանիշները. շուկայի դարձած են երէկի նուիրական յրացները. զեղեցիկ խոթալներու փոխարէն տղերութիւններ իշխած են սատ ու անդ:

Ահա այդ պատճառով այսօր պատեհ առիթն է վերլիշելու Սարգիս Տիրունիի թողուցած կտակը, վերարժեւորելու պայքարի այն յանգնութիւնը, որ մեծ նահատակը հրիտակեց իր պաշտելի ժողովուրդին, սիրելի կուսակցութեան եւ Տիրունիական անդամաշարքին:

Նահատակ Սարգիս Տիրունիէն ժառանգուած կտակը նուիրական մատուց մըն է անկորնչելի: Պահենք ու պահպանենք այդ կտակը:

Խմբագրական «Արարատ»

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճոց է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԱԻՆՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Բունակալութեանց, նեխած վարչակարգերու եւ բրածոյ վարչախումբերու համար անհանդուրժելի տարրեր են ուղղամիտ մտաւորականները. եւ մանաւանդ՝ համարձակախօս գրիչները:

Անսպառ է ցուցակը այն ճշմարտախօս մտաւորականներուն, որոնք անխնայօրէն հալածուած են ոստիկանական ռեժիմներու կողմէ: Նոյնիսկ նեղ շրջապատի մարդիկ, որոնք բազկաթոռներու մէջ ընկողմանած են ու յղիացած, անմարտելի կը համարեն իրենց ուղղուած փոքրագոյն դիտողութիւն մ'անգամ: Իսկ ամէն մտաւորական չի՛ կրնար ըլլալ ինկարկու ու քծնապաշտ. վերջապէս ճշմարտասիրութիւնն ալ առաքինութիւն մըն է:

2007 Յունուար 19-ին Հրանդ Տինք օրը ցերեկով զգեանուեցաւ, որովհետեւ կը պատկանէր մտաւորականներու այն հոյլին, որոնք գրիչը վերածելով գէնքի կը ջանան բարեփոխել իրենց շրջապատի կարծրատիպերը, երեւոյթները կ'արժեւորեն իրենց ճշգրիտ բնութագրումով, իրենց հատու հայեացքին նշակակ կը դարձնեն յուր բարբերն ու վարբերը հնաբոյր դրուածքներու:

Հրանդ Տինք կ'ապրէր ու կը գործէր այնպիսի մթնոլորտի մը մէջ, որ հանրածանօթ է իր անհանդուրժողականութեամբ: Տակաւին օսմանեան օրերէն մինչեւ համիտեան միահեծանութիւն այդ միջավայրը կը տուայտէր գրաքննութեան եւ բանտարկութեան կապանքներով երբեմն ֆիզիքական վերացումներով: Ըստ երեւոյթին, այդ երբեմնի աւանդութիւնը շարունակուեցաւ յետագային՝ աթաթութեան ժամանակաշրջանէն հասնելու մինչեւ ժամանակակից Թուրքիա, որուն դեկը ստանձնած այրեր դեռեւս չեն ձերբազատած այլամերժութեան վարակէն:

Մարդ կը տարուի մտմտալու. ինչո՞ւ կոճղացած վարչաձեւեր կ'անհանգստանան մտաւորականներէ. կը սարսափին յաճախ: Արդեօք այդ անվնաս, անշուք եւ խոնարհ պայմաններու մէջ ապրող գրիչները ի՞նչպէս կրնան վտանգել սուրով եւ հուրով իշխանութիւն հաստատած կառույցները. ո՞ւր է մտապիտութեան արմատը: Անցեալին կիսաքաղց փիք գրագէտները ինչպէս կը բարկացնէին հօրագոր գահակալները, անոնց հաճոյակատարներն ու գործակալները:

Քաղաքական, ռազմական եւ դիւանագիտական գործիչներու նկատմամբ ֆիզիքական հաշուեյարդարները սովորական երեւոյթներ եղած են պատմութեան մէջ. ընթացիկ պատահարներ: Սակայն գրիչի սպասարկուն թիրախ ընտրող հասարակարգը ապացոյցն է անոր բարոյհանգեցանական ապականութեան: Բարոյագուրկները կը վախնան խիզախ գրիչներէ. իրենց մերկապարանոց էութիւնը պարտկողները կը ցանկան զգեանուած տեսնել քաջ լրագրողները:

Այսօր, Հրանդ Տինքի յիշատակին երեք մտորումներ կարելի է առանձնացնել:

Ա) Ազգային.- ան իր նահատակութեամբ քողագերծեց թրքական խաւարամտութեան վարագոյրը, որ ցայսօր իր ազգայնամոլ խառնուածքով կ'ուրանայ իր որդեգրած ազգային խտրականութեան քաղաքականութիւնը: Յաշտ մարդկութեան Տինք ապացուցեց, որ այսօրուան Թուրք-



իան նմանակն է երէկին. քաղաքակրթուելու եւ ժողովրդավարական ձեւանալու ամէն ճիգ խաբկանք մըն է պարզապէս: Ան ազգային սթափութեան անազանգ մը հանդիսացաւ, մատնանշելու, թէ թրքական մեղրածորան կարգախօսներուն ետին կայ ժանիք ու ճապուռ յեսանած վարչակարգ մը՝ որ կը դիեցնէ անաբեկիչներ, կեղծպարիշտ դատավարութիւններով կրնայ արդարացնել ոճրագործ ու քրէական տարրեր. ուստի՝ պարտինք ըլլալ աշալուրջ, սթափ ու տեսուռ:

Բ) Թրքական.- Տինքէն հոսած արիւնը թրքական հանրութեան ալ ուղղուած պատգամ մըն էր: «Հէֆիմիդ էրմենի» կը վերաբերէր բոլոր համարձակախօսներուն, քանզի նոյն եաթաղանին զո՛հ գացին թուրք ազատամիտներ, քրիստոնեայ քարոզիչներ, քիւրտեր ու եգտիներ: Երբ ան կը գրէր թէ իր սիրտը կը դողդողայ վախուորած աղանդի մը նման, այս կ'ակնար-

ՏԻԱՐՊԷՔԻՐԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՅՐ՝ ՍԱՐԳԻՍ ԷՔԷՆ ՄԱՅԱՑԱԾ Է

Խտացեալ դարմանումի տակ գտնուող 86 ամեայ Սարգիս Էքէնը, երեկ, հիւանդանոցին մէջ կնքած է իր մահկանացուն: Սարգիս նախքան մահանալը կը բնակէր Ս. Աստուածածին եկեղեցւոյ բակը: Շուրջ 4 շաբաթներ առաջ իր առողջական վիճակի վատթարացման պատճառով, զայն մեծ դժուարութեամբ կրցած էին փոխադրել հիւանդանոց, Սուրի մէջ տիրող ծանր բախումներու եւ փողոց ելլելու արգելքի պատճառով:

Ննջեցեալի Սուրիոյ Հայկաքաղաքին մէջ ապրող եղբայրը պատերազմական իրավիճակէն դուրս գալու նպատակով փոխադրուած էր Հայաստան, իսկ կինը, 60 տարի ուշացած ամուսնութենէն 2 ամիս ետք՝ մահացած էր:



Քաղաքի մէջ տիրող բախումներու հետեւանքով, Սարգիս Էքէնի յուղարկաւորութիւնը կատարուած ասորիներու Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, եւ ոչ թէ՛ հայկական Ս. Կարապետի մէջ:

կէր նաեւ Թուրքիոյ վտանգուած եւ անապահով միջավայրին: Միայն հայկական պատկանելիութեան համար չէջողքացաւ ան, այլ՝ թրքական ճահճացած ընկերութեան մէջ դրական տեղաշարժ կատարելու հետամուտ ըլլալուն համար եւս:

Գ) Խոնարհութեան վկան.- Հրանդ Տինքի տապալած լուսանկարը տեսնելով ակամայ կը մղկտանք, քանի գրիչի ու արդարութեան ծակ կոչիկով գինուոր մըն էր անչնչացած: Համեստագոյն մտաւորական մը՝ հեռու նանիր շոշոկանքէ: Իր արտաքինը չէր առաջնահերթը, այլ՝ ճենճերող ներքինը, բռնատիրութեան դէմ միացող հոգին, արագահոս գրիչը՝ որ թաթխուեցաւ արեան թանաքով: Իր «Ակօս»ով ազատութեան եւ արդարութեան վարարուն ակօս բացաւ, իր հա-

մեստ եւ ուղղամիտ վարքով գլխովին շրջեց թրքական հասարակութեան անտարբերութիւնը, անիրագելութիւնն ու կուրամտութիւնը, որուն պատճառով յետ-մահու արժանացաւ ժողովրդային հոծ համակրանքի ու մեծ կարեկցանքի: Ով ճակատագիր, ան իր նահատակութենէն ետք աւելի դարձաւ հանրաձանաչ, յեղաշրջիչ եւ ուղղորդիչ:

Բունակալութեանց գոհերուն վերջինը չեղաւ ան ի հարկէ, բայց ոսկի տառերով գրուեցաւ իր անունը այն մատենակն մէջ, ուր արձանագրուած են անմահ անունները այն մտաւորականներուն, որոնց գրիչը արդարաւոր չէր բնաւ, այլ գէնք մը մարտաշունչ: Առանց գէնքի մտաւորական գինուոր մըն էր Հրանդ Տինք: Յարգանք անմահանուն մարտիրոսի յիշատակին:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND TELETHON

COMMUNITY RALLY

Sunday, January 24, 2016

right after the Sunday Services, at St. Peter Armenian Church
17231 Sherman way, Van Nuys, CA 91406

To Support The Armenian Community in War-Torn Syria Through The Upcoming SARF "SAVE A LIFE" Telethon

which will take place on Sunday, February 21, 2016, 2-8 PM

For information, contact SARF at (818) 646 1166 or office@sarftelethon.org

«ԴՐԱՄԸ ԻՆՅԵՐ Կ'ԸՆԵ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՀԲԸՄ-ի վ. ե. Թ. Մանուկեան կեդրոնի արդիական թատերասրահի շինարարութեան աւարտին սպասող՝ 2015թ. տարեշրջանէն ստիպողական որոշ դադար մը առնելէ ետք, ՀԲԸՄ-ի «Գրիգոր Սաթամեան» թատերախումբը, 2016թ. Նոր Տարին ողջունեց հաճոյալի անակնկալով մը, «Հայրս Ո՞վ է» բեմադրութեամբ զաղու-թիս ծանօթ՝ անգլիացի թատերագիր Բէյ Գունիի «Դրամը ինչե՞ր կ'ընէ» թատերախաղով:

ասին օղակայան երթալու՝ Պարսելոնա ճամբորդելու համար փորձանքի մը չի հանդիպած: Միլվան կը հակառակի եւ կը պահանջէ որ պայուսակը յանձնուի ոստիկանութեան, եղածը զողութիւն համարելով: Յակոբին անտեղիտալիութիւնը եւ Միլվային յամառութիւնը, մէկ կողմէ, եւ արտաքին ազդակներ՝ Տէվրն Փորթ (Վիզէն Պալապանեան) Յակոբը շորթելու եւ շահագործելու դիտաւորութիւնները, շարժավար Համլէթի (Արամ Մուրատեան) յաճախակի գրգռուցող միջամտու-



Եօթը Պատգամները Եօթը Եկեղեցիներուն գիրքը Յովհաննէս Յայտնութեան գիրքի առաջին երեք գլուխներուն մէջ երեւցած Քրիստոսի պատգամները կը ներկայացնեն անոնց իմաստուն մեկնաբանութեամբ Շնորհք Պատրիարք Հօր կողմէ, հոգեւոր եւ մեր աւօրեայ կեանքին առնչակից դարձնելով զանոնք: Այդ եօթը եկեղեցիները պատմական ճշգրտութեամբ կ'երեւին այժմու Թուրքիոյ արեւմտեան նահանգներու, մերձ Եգէական ծովու շրջաններուն մէջ, որպէս այն ատենուս յայտնի քաղաքները՝ Եփեսոս, Չիտիս, Սիւս, Պերսիս, Թիւս, Փիլա-Տելֆիս, ՍարՏիսի եւ ԼԱԻՈՒԿիս:

Ինչո՞ւ եօթը եկեղեցի եւ եօթը պատգամ, եւ ոչ մէկ աւելի կամ մէկ պակաս: Եօթը թիւը կատարելութեան նշանն է, եւ ինչ որ յայտնուեցաւ այդ եկեղեցիներուն, յայտնուած եղաւ Քրիստոսի ԲՈՂՈՐ Եկեղեցիներուն: Արարչագործութեամբ Աստուած եօթներորդ օրը լրացուց իր ստեղծածները, եւ յաջորդ օր հանգիստ ըրաւ: Կատարելութեան թիւը եօթը եղաւ, ինչպէս մեր Ս. Մերոպ Մաշտոց երբ հնարեց մեր այլուրեքներ, եօթներորդ գիրքը «է» կոչեց, որ է կատարելութիւն եւ Աստուծոյ անունը նոյնիսկ, երբ Աստուած Մովսէս Մարգարէին յայտնեց զայն անպատին մէջ:

Եօթը Պատգամներն են հետեւեալները: Ապաշխարէ եւ յիշէ թէ ուր էիր. վերադարձիր առաջին գործերուդ: Ամուր բռնեցէք ձեր ունեցածը մինչեւ ես գամ: Մի՛ վախնար շարժարանքէ եւ հաւատա-

Շարք էջ 19



MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

1111 S. Glendale Avenue
Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Tel: (818) 547-1476

«ՊՏՈՅՏ ՄԸ ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԵՁ»

ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒՆՆԱՆ

Յուլիս 19ին (2014) գորաւոր անձրեւ, կայծակ եւ որոտումներ իրարու խառնուած արեւը կը հալածէին:

Այս մեր ուխտագնացութեան վերջընթեր օրն էր: Առաւօտեան ժամը 10:00ի ատենները անձրեւները դադրեցան, բայց մութ ամպերը տակաւին դարանակալ կը սպասէին վերը: Արեւը երբեմնեքեմն ամպերուն տակէն բարեւ կու տար մեզի եւ մեր ներողամտութիւնը կը հայցէր ստեղծուած անախորժ դրութեան համար:

Նախաճաշէն ետք իջանք վար պանդոկին սպասման սրահին, մէջ խումբի միւս անդամներուն սպասելու: Ըսեմ որ նախաճաշի ժամանակ մեզի սպասարկող աղջիկներն ու տղաքը շատ ազնիւ, ժպտուն եւ քաղաքավար էին: Կարծես մեր գիտցած բարբարոս թուրքերէն չէին սերած անտնք:

Պանդոկի դրան առջեւ քանի մը փերեզակներ անուշահոտ, կաշիէ վերարկու, կնոջական շալեր եւ այլ իրեր կը ծախէին: Այս փերեզակները «թափեցան» մեր վրայ: Ամէն մարդ իր ապրանքին գովքը կը հիւսէր: Նայեցայ կաշիէ վերարկուներուն: Լաւ ապրանք էին բայց գէշ կարուած: Իւրաքանչիւր վերարկուի համար քսան թրքական ոսկի (տասը տոլար) ուզեց մարդուկը: Թոռնիկներու համար երեք հատ գատեցի: «Քանի որ երեք հատ առիր, քեզի գեղջ պիտի ընեմ, միայն յիտուն հինգ ոսկի տուր».- ըսաւ վաճառորդը: Ըսի. «Երեքին համար միայն քսան ոսկի կու տամ»: Քիչ մը եւս սակարկելէն ետք, քսանհինգ ոսկիի գնեցի վերարկուները: Ուրիշ վաճառորդ մը կը փորձէր Ալիսին շալ ծախել: Ալիսին բոլոր ձիգերը մարդէն ազատելու ապարդիւն կ'անցնէին: Մօտեցայ մարդուն, քանի մը հատ գատելէս ետք միայն մէկ հատին գինը առաջարկեցի բոլորին համար: Մարդը քիթին տակէն հայհոցեց, հասկցաւ խաղա եւ ապրանքները հաւաքելով հեռացաւ: Հոն էր նաեւ Սուրիացի գաղթական մը որ կ'ուզէր մեր կօշիկները ներկել: «Ընտանիք ունիմ, պզտիկներս անօթի են, ձեր կօշիկները ներկեմ, լաւ կ'ըլլայ»: - կ'ըսէր խեղճը: Հակառակ որ ներկուելիք կօշիկ չէինք հագուած, «պաճաճախիս (աներորդիս) հետ մարդուն ձեռքը քանի մը թրքական ոսկի սահեցուցինք: Յիշեցինք, որ երբ ժամանակին մեր հայրերն ու մեծ հայրերը գաղթականներ էին, այս արաբ ազնիւ ժողովուրդը իրենց չունեցած հացէն մերիններուն ալ բաժին հանած էին: Քանի մը թրքական ոսկի մեզի համար արժէք չունէր, բայց այս ազնիւ Սուրիացին գաւակներուն օրուն հացը կրնար գնել:

Իսթանպուլը իր շրջակայքով շուրջ 15 միլիոն բնակիչ ունի: Հսկայական քաղաք մը (150 X 75 km.) որ 2013-ին հիւրընկալած է նաեւ 3 միլիոն գթասաշրջիկներ: Կրնա՞ք երեւակայել միայն գթասաշրջիկներէն եկած եկամուտը...:

Շրջեցանք Գարաքէոյի շրջանը որ հրեաներով բնակեցուցուած է: 1491-ին երբ Սպանիան հրեաները երկրէն արտաքսեց, անոնք 3 ամիս նաւերու մէջ, Միջերկրական Օվոսն վրայ թափառելէն ետք, Սուլթանը ընդունեց զանոնք եւ այդ շրջանը անոնց տուաւ բնակեցման համար:

Պէյօղլուի Թաքսիմի հրապարակին ինքնաշարժներու խճողումը, ճիշդ Լիբանանի պէս ... ինքնաշարժները իրարմէ քանի մը մատ հեռաւորութեան վրայ գիրար կը հրմշտկէին: Հանրակառքերը երբ հասնէին կայարան, հրմշտուկ մը կը սկսէր ներս մտնելու, այնքան մը որ վար իջնողները շատ դժուարութիւն կ'ունենային:

Թաքսիմի հրապարակին կողմերը գտնուող կրպակներուն մէջ կարելի էր գթասաշրջիկները հետաքրքրող գրքոյկներ, յուշանուէրներ եւ ուտելիքներ գտնել: Կառքերու վրայ շատ համով եզրիպտացորեն (տարը) կը խաշէին եւ կամ ածուխի վրայ կ'եփէին: Քանի որ մէկ հատը քիչ էր ինծի համար, հատ մը խաշած հատ մըն ալ ածուխի վրայ եփածներէն առի (անշուշտ Ալիսը դիտողութիւն ըրաւ որ շատ կը գիրնամ կոր...):

Պոլիսը հիմնուած է 7 (եօթ) բլուրներու վրայ: Իւրաքանչիւր բլուրին գագաթին վրայ հսկայ մղկիթ մը շինուած էր, մէկը միւսէն գեղեցիկ: Իւրաքանչիւր Սուլթան իր անունով մղկիթ մը շինել տուած է, ինչպէս նաեւ սուլթանին մօր անունով: Մեծ վէճերն են ալ ետ մնացած չէին: Բնականաբար մեծահարուստ թուրքերն ալ Մուհամմէտին քով տեղ ապահովելու համար մղկիթներ շինած են, այնպէս որ ամէն քայլափոխի մղկիթի մը կը հանդիպիս: Այս մղկիթներուն մեծ մասը գործն է հայ ճարտարապետներու, ինչպէս Սինան Փաշային կամ Պալեան եղբայրներուն: Սինան Փաշայի պարագային, Սուլթան Սուլէյման Սքանչեկին գինք Պոլիս բերել տուաւ 22-24 տարեկանին որ շրջանի լաւագոյն եւ գեղեցկագոյն մղկիթներն ու պալատները շինեց: Փակագիծի մէջ ըսեմ որ Սինան Փաշան սիրահարուած էր Սուլթանին քրոջը: Նման պարագայի մը ան մահապատիժի պէտք էր ենթարկուէր, բայց քանի որ Սուլթանը գինք շատ կը սիրէր, ներեց անոր պայմանաւ որ անգամ մըն ալ կապ չհաստատէ այդ շատ գեղեցիկ աղջկան հետ (խեղճ Սինան):

Նշմարեցինք որ Պոլիս փողոցներուն վրայ հարիւրաւոր շուներ կը սլքտան, անտէր եւ անտիրական (երկու տեսակի «շունեերէն» ալ ...): Բարեբախտաբար այս շուներուն «մէկ տեսակը խաճնողներէն չէին...»:

Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը

Պասը մեզ Պոլսոյ փողոցները պտտցնելով տարաւ Հայոց Պատրիարքարանը:

Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը հիմնուած է 1461-ին: Երբ Սուլթան Մէհմէտ Բ.-ը Պոլիսը գրաւեց, Յոյն Պատրիարքին հեղինակութիւնը եւ յոյներուն քաղաքական ազդեցութիւնը նսեմացնելու համար, հայ եւ թուրք բնակչութեան թիւը բազմացուց Պոլսոյ մէջ եւ իր վաղեմի բարեկամ՝ Յովակիմ Եպիսկոպոսը Պուրսայէն հրաւիրեց եւ Հայոց Պատրիարքութիւնը հիմնեց: Յովակիմ Ա. ճանչցուեցաւ որպէս հայերու կրօնական եւ աշխարհական ղեկավարը եւ ստացաւ նաեւ «Միլլէթպաշը» (ազգապետ) տիտղոսը:

Սուլթան Մէհմէտ Բ. մասնաւոր ֆէրմանով մը (հրովարտակ) Հայոց Պատրիարքութեան իրաւա-



Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը

սութիւնները ճշդեց, որոնք շատ ընդարձակ էին: Դժբախտաբար այդ հրովարտակը Պոլսոյ եկղեցիներու բազմաթիւ հրդեհներէն մէկուն մէջ այրած է:

Կ. Պոլսոյ պատրիարքները շատ մեծ իրաւասութիւններ կը վայելէին Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող իրենց հօտին վրայ, մինչեւ անգամ կրնային «անհնազանդ», «յանցաւոր» հայերը բանտարկել եւ անխնայօրէն ծեծել ... : Քանի որ Կայսրութեան մէջ պետութիւնը եւ եկեղեցին իրարմէ բաժնուած չէին, Պատրիարքը գրեթէ նախարարի մը (վեզիր) ուժը ունէր: Ան ազգապետն էր նաեւ Ղպտի, Ասորի, Եգիպտի եւ Նեստորական փոքրամանութիւններուն: 1863-ին, Ազգային Սահմանադրութեամբ Պատրիարքին իրաւասութիւնները ճշդուեցան, յստակացան, պետութեան կողմէ վաւերացուեցան եւ այսպիսով՝ էրմէնի Միլլէթէին ներ-

քին կրօնական, կրթական, ընկերային եւ համայնքային գործերը օրինաւորապէս անցան Պատրիարքարանի հսկողութեան տակ: Ժողովրդային քուէարկութեամբ ընտրուած պատուիրակները կ'ընտրէին Պատրիարքը:

Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը հիմնուելէն ի վեր, 84 Պատրիարքներ գրաւած են այդ աթոռը: Այսպէս, 74 պատրիարքներ Օսմանեան Կայսրութեան ժամանակ (1461 - 1908), 4 պատրիարքներ Երիտասարդ Թուրքերու իշխանութեան ժամանակ (1908 □ 1922) եւ 5 պատրիարքներ՝ Թրքական Հանրապետութեան ժամանակ (1922 □ մեր օրերը): Այսօր, նկատի ունենալով որ Տէր Մեսրոպ Մութաֆեան Պատրիարքը «անկարողութեան» պատճառով հիւանդանոց պէտք է մնայ եւ չի կրնար Պատրիարքը լինել:

Շաբ.ը էջ 18

Armenian Athletic Association

Big Screen TVs • Food and Refreshments

Sunday, February 7, 2016 at 1:00 p.m.

1060 N. Allen Ave. Pasadena

For More Information Call
Vartan (818) 384-2987 or Vahe (626) 354-5924

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՐՎԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆԻ 38-ՐԴ ՅԱՏՈՐԸ

ՎԵՐ. ԳԻՆՈՐԳ ԹԵՐԵԱՆ

2016-ի Նոր Տարուան առաջին շաբթուան ընթացքին՝ Տիթրոյթի Հայ Ժառանգութեան Յանձնախումբը լոյս ընծայեց Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեանի 38-րդ երկրագունեան հատորը Տօներ Եւ Նշմարներ վերտառութեամբ: Գիրքը կը բաղկանայ 158 էջերէ - 26 անգլերէն եւ 15 հայերէն յօդուածներէ, որոնք աղբիւր ունին կրօնական, ազգային, ընկերային, աստուածաբանական, դաստիարակչական բնոյթ ունեցող նիւթերու հետ: Հեղինակը իր այս հատորը ձեռնարկ է իր մանկութեան յիշատակը առաջին եկեղեցիին, էփրօ Օլուքի (Քեսապ) էմմանուէլ Հայ Աւետարանական Եկեղեցիին, ուր ան ստացած է իր նախնական հոգեւոր դաստիարակութիւնը:



այդ ահաւոր ախտը (էջ 58-60). Ինչո՞ւ համար անհրաժեշտ է քրիստոնէական նկարագիրը մարդոց աւօրեայ կեանքին մէջ (էջ 68-70). Ինչո՞ւ համար անկարեւոր նիւթեր առաջնահերթ տեղ կը գրաւեն մարդոց կեանքին մէջ (61-63): Ատոնք, եւ ատոնց նման հարցեր, սոյն հատորին մէջ վաստակաշատ հեղինակը կը վերլուծէ եւ պատասխաններ կը հայթայթէ քրիստոնէական տեսանկիւնէն:

Սոյն հատորին մէջ գործածուած անգլերէն եւ հայերէն լեզուներու ոճը ինքնատիպ եւ դիւրահասկողի է, իսկ անոր բովանդակութիւնը՝ ներշնչիչ եւ օգտաշատ:

Վերապատուելի Թութիկեանի սահմանազանց սէրը քրիստոնէական սկզբունքներու եւ հայ մշակոյթի հանդէպ բացառապէս եւ վարակիչ են այս հատորի գանձանքէն էջերուն վրայ: Ընթերցողը դիւրաւ կը տեսնէ թէ հեղինակին կրօնական խորունկ համոզումներու հետ գուզահետ անոր հայկականութիւնը իրեն համար խորունկ ապրում մըն է:

Վերապատուելի հեղինակին անխախտ համոզումը այն է թէ հայ ժողովուրդի գոյութեան պահպանման ամենավստահելի երաշխիքներէն մին իր քրիստոնէական կրօնին հետ, իր մշակոյթին է: Ա՛ն է որ կ'իմաստաւորէ հայ մարդու ազգային ինքնութիւնը (էջ 128-130). Ան նաեւ կը հաւատայ որ հայապահպանում եւ Հայ Դատ սերտօրէն կապուած են իրարու, զիրար կը բացատրեն, իրարմով կ'ամբողջանան եւ իրարմով կ'իմաստաւորուին:

Ահա վասիկ, այս բազմավաստակ Աստուծոյ ծառան, որպէս արգասիք իր անձնդիր ճիգերուն, մտաւորական խոհունակութեան եւ անսակարկ նուիրումին, լոյս կ'ընծայէ իր այս նոր հատորը, զոր անվերապահօրէն կը յանձնարարենք ընթերցասէր հասարակութեան:

Գիրքը ստանալու համար կարելի է դիմել Armenian Heritage Committee, 3922 Yorba Linda Blvd. Royal Oak, Michigan 48073-6455 (USA).

«ԴՐԱՍԸ ԻՆՉԵՐ Կ'ԸՆԷ»

Մարտնակուած էջ 8-էն

Հնորհներ: Նոյնպէս, Սաթամեան Թատերախումբի գնահատուած դերակատարներէն Արի Լիպարիտեան՝ Սթէյթըրի, Արփի Սամուէլեան Անիի եւ Վիգէն Պալապանեան՝ Տէվրնփորթի դերերով հաւասարապէս գրաւեցին հանդիսատեսներու ուշադրութիւնը:

Պիտի արժէր մեր գնահատանքի խօսքը ուղղել նաեւ բեմահարթակի ետին գործող բեմադրողներուն, ի մասնաւորի բեմավար եւ «Տէքորի» գունաւորման վարիչ՝

Նարինէ Աւագեանին, բեմի զեղարուեստական յղացման եւ պատրաստութեան վարիչ՝ վաստակաշատ Մանուկ Սաթամեանին, երաժշտութեան եւ լոյսի դասաւորումներու գծով՝ Ռաֆֆի Գալանքարեանին եւ բոլոր օգնականներուն, որոնք սատար հանդիսացած էին բեմադրարարութեան:

Արդարեւ, գնահատանքի արժանի ներկայացում մը, որուն համար կը շնորհակտորենք Գրիգոր Սաթամեան թատերախումբը, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

ԵՌՈՒՈՐԵԱԿՆԵՐ ԶՕՆ՝ ԱԲԳԱՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ Ռ. ԿՈՐԻՒՆ

Յուզիչ էր պահը ուրախ - ոգեւորիչ, Հայկական Ձիւնուծն էր հաղորդում Եռորեակներ որոշումով յուսադրիչ, Սիասիւն ծառայելու զինուոր են գնում:

Երեք եղբայրներ՝ Արսէն, Արթուր եւ Արմէն, Երեքն էլ մէկ բոյի արի տղաներ, Ազգանունն է իրենց Աբգարեան, Աւետիս ու Սամիկ իրենց ծնողներ:

Սամիկ մայրիկն է խօսում պարծանքով՝ -Ձաւակներիս սիրով եմ ուղարկում, Քանի որ հայրենիքն սկսում է ինձնով Ու բոլոր մայրերով մեր հայրենիքում:

Հայրը գաւակներին մաղթանք է անում՝ -Ձեր ճամբան թող միշտ կանաչ լինի, Խաղաղ ու անփորձանք ծառայութիւն լինի, Հայրենի դրօշը յար յաղթական լինի:

Ձիւնակոչիկներ մեր սիրելիներ, Դուք գաւակն էք ողջ հայութեան. Հայրենիքն է ձեզ գուրգուրում, ինչպէս՝ ձեր մայրն է ձեզ փայփայում:

Հայ զինուորը կռուանն է մեր ժողովրդի, Սէրն ու գուրգուրանքն է մեր բոլորի,

Պատիւն ու իրաւունքն է մեր երկրի Անկատար իղծերի յոյսը մեր ազգի:

Հայոց զինուոր ճամբէդ շէն լինի, Երթդ հանապազ անպարտ լինի, Ողջ հայութեան բռունցքն ես դու, Հայրենի պաշտպան գաւակն ես դու:

Դե՛հ յառաջ քաջեր, սահմանները ձեզ են կանչում, Թշնամի՞ն դարանակալ վտանգ է սպառնում, Մեր Արցախին տիրելու փորձեր է անում, Հայրենի յաղթելու սաղարանքներ նիւթում:

Հէ՛յ քաջորդիներ Թորգոմեան ցեղի, Ձեր սուրը անյաղթ թող միշտ շողողայ, Քանի դուք կաք լեռների պէս ամեհի Թշնամի՞ն չի յանդգնի մեզի սպառնայ:

Բազում հայորդիների արիւն է թափուել, Մինչեւ ազատագրուել է Արցախը մեր, Դեռ շատ հողեր մնում են գրաւեալ, Որոնք չեն մոռացուի յիշողութիւնից մեր:

Դարեր շարունակ գուրկ բանակից Լայրել ենք խեղճ ազատութիւնից, Բանակն է խաղաղութիւն բերում Ժողովրդին ազատ կեանք պարգեւում:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ----- Address: ----- City: ----- State: ----- Zip Code: ----- Country: ----- Tel: ----- Email: -----

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՊԵՏՔ Է ՅԱՐԳԱՆՔՈՎ ՎԵՐԱԲԵՐԻԼ

Չինական փոխտնտեսությունները կեանքի մասին

1. Մի մոռնար անկեղծորեն ժպտալ ու սիրտը սիրով լեցնել: Անիկա հիանալի միջոց է ընդդեմ բոլոր հիւանդութիւններու: Երբ տխուր ես, բարկացած, ճնշուած ու կու լաս կամ կը ջղայնանաս, մարմինդ կը սկսի թոյններ արտադրել: Իսկ երբ ուրախ ես ու երջանիկ, կը պատահի հակառակ պատկերը, մարմինդ կը սկսի բուժիչ հեղուկ արտադրել: Գաղտնիք չէ, որ այսօր մենք կ'ապրինք անհանգիստ կեանք մը: Շատեր իրենց աշխատանքային օրը կ'աւարտեն գլխացաւով, ու ասիկա կը համարուի սովորական երեւոյթ: Այն տապալակ, որ կը զարգանայ եւ մեր մէջ, եւ մեր շուրջը, անյայտ պէտք է վերացնել: Անհրաժեշտ է միայն սորվիլ, որ երբ բարդ իրավիճակ կը ստեղծուի, ինչ ալ պատահի, թոյլ չտանք, որ անիկա կլանէ մեզ: Ատոր համար պէտք է շատ ժպտալ: Այս պարզ ժեստին շնորհիւ աշխարհը, կարծես, կը փոխուի, եւ ինչ կը սպառնար վերածուիլ անսխորժութեան՝ կ'անհետանայ: Սկիզբը հաւանաբար դժուար է գնահատել ներքին ժպտի հետեւանքները, բայց ժամանակի ընթացքին անիկա պիտի դառնայ կեանքիդ անբաժանելի մասնիկը: Ուր ալ ըլլաս, ժպտա՛, սիրով լեցուի: Ատիկա շատ օգտակար է: Այս պարզագոյն անյաշողութիւնները կը հալին՝ ինչպէս սառույցը ջերմ արեւէն:

2. Քիչ անհանգստացիր եւ շատ աշխատիր: Քիչ մտածէ ապագայի եւ անցեալի մասին, քանի որ անոնք կը ծնին անհանգստութեան պատճառներ, իսկ փոքրիկ անհանգստութիւնը անգամ պատճառ կրնայ դառնալ ճնշուելու: Ատոր փոխարէն փորձէ կեդրոնանալ՝ զարգացնելով օգնելու եւ ներելու ունակութիւններդ:

3. Պէտք է զարգացնել մտքի ուժը: Արեւելեան լեզուներէն շատերուն մէջ, ինչպէս չինարէնի, միտք եւ սիրտ հասկացութիւնները կ'արտայայտուին նոյն բառով: Երբ մարդը կը հասնի այն մակարդակին, որ այլեւս ինքն իր վրայ սեւեռուած չէ ու կրնայ մոռնալ իր անձին մասին, կը ստանայ հիւանդութիւններէն ազատելու միջոցներ:

4. Կառավարէ սեռական հակամարտութիւնը եւ թոյլ մի տար, որ անոնք կառավարեն քեզ:

Առհասարակ կեանքի մէջ ամէն ինչ պէտք է չափաւոր ըլլայ, այս պարզագոյնն է նաեւ սեռական կեանքը: Սեռական մեծ աշխոյժութիւնը կտրուկ կը նուազեցնէ մարդու կենսական ուժին պաշարը եւ կը վատթարացնէ կեդրոնանալու ունակութիւնը: Սեռական ցանկութիւնը կը յառաջանայ զգայարաններու միջոցով ու կը զրգռէ միտքը: Անհրաժեշտ է կառավարել զգացումներն ու ցանկութիւնները:

ՍԽԱԼ ՍՆՈՒՆԴԻ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԵՂՈՒՆԳՆԵՐԸ ԿԸ ԲԱՐԱԿԱՆ ԵՒ ԿԸ ԿՈՏՐՏՈՒՆ

Առողջ եղունգը պէտք է հարթ ըլլայ եւ ունենայ թոյլ կարմրաւուն փայլ: Եղունգները կ'աճին անդադար, 1 օրուան ընթացքին՝ 0,1 մմ, ի դէպ, աւելի արագ՝ մանուկ եւ ծեր հասակին: Որոշ հիւանդութիւններու կամ սխալ սնունդի պարագային եղունգները կը բարական եւ կը կոտրուին: Նման պարագաներու խորհուրդ կը տրուի եղունգներուն քսել կիրտոնի հիւթ: Օգտակար է նաեւ 20-30 օրուան ընթացքին եղունգները 10-15 վայրկյ-

5. Պէտք է լաւ պահել գլուխը եւ տաք պահել ոտքերը: Գլխուն պէտք է յարգանքով վերաբերիլ: Անիկա Աստուծոյ եւ մտքի տաճար է, որ կը կառավարէ բոլոր գործարանները: Գոյութիւն ունի կանոն. «գլուխը գով պահէ, իսկ ոտքերը՝ տաք»: Այս ձեւով կը խուսափինք գլխուն մէջ շատ հոսանքի կուտակումէն, որ կրնայ վատ զգացումի կամ հիւանդութեան պատճառ հանդիսանալ: Երբ չափազանց շատ հոսանք կ'երթայ դէպի գլուխը, կրնայ բարձրանալ արեան ճնշումը: Մինչդեռ այդ հոսանքը տեղափոխելով ոտնաթափերը՝ կրնանք իջեցնել արեան ճնշումը, իսկ հետեւելով, որ ոտքերը տաք ըլլան, կը կանխենք սրտի կաթ ուսածները:

6. Շատ կարեւոր է նաեւ վիզը տաք պահել: Վիզին մէջէն կ'անցնին բազմաթիւ անօթներ ու ջրղեր, որոնք կ'երթան դէպի գլուխը: Պէտք չէ չափազանց լարուած նայիլ կամ լարուած աշխատանք կրնայ տարբեր հիւանդութիւններու պատճառ դառնալ: Կեանքը երկարելու եւ հիւանդութիւններէն խուսափելու համար չինական բժշկութիւնը խորհուրդ կու տայ օրուան ընթացքին յաճախակիօրէն կատարել թուքը կու տալու վարժութիւնը:

7. Ուտելու փոխտնտեսությունները: Պէտք չէ այնքան ուտել, որ հարկադրուած ըլլաք պառկիլ կամ նստիլ, ասիկա կը կըճատէ մարդուն կեանքը: Սեղանէն պէտք է ելլել կիսակուշտ վիճակով ու չմոռնալ զբօսանքի մասին: Քնանալէն առաջ կարելի չէ ուտել: Կարելի է ուտել քիչ, բայց յաճախակի: Այս պարզագոյն մարտնչութիւնը տեղի կ'ունենայ աւելի դիւրին: Սկիզբը պէտք է ուտել տաք ճաշատեսակները, ապա զաղջ, իսկ ուտելէն առաջ միշտ պէտք է խոր շունչ քաշել ու քիչ մը օդ կլլել: Առաւելագոյն կծու ճաշատեսակները պէտք է ուտել զարնան ընթացքին, թթուն՝ ամրան, դառը՝ աշնան, իսկ քիչ աղին՝ ձմրան: Եթէ ամէն պարագայի չարաչահած էք ուտելը, կարելի չէ շատ ջուր խմել, իսկ խմելէ ետք պէտք չէ արագ կլլել: Սովորաբար դժուարամարտութիւնը կը յառաջանայ, երբ երկար ժամանակ անօթի մնալէ յետոյ միանգամայն կ'ուտէք կշտանալու աստիճան: Կարելի չէ դատարկ ստամոքսին հոսմ միրգ ուտել, իսկ հոսմ բանջարեղէնն ալ կը փճացնէ մորթին գոյնը:

8. Պահպանել չափը: Չափազանց երկար քալելը վնաս է յօդերուն, շատ երկար նստիլը կը վնասէ մկաններուն, չափազանց երկար կքած նստիլը՝ ուղորներուն, չափազանց երկար պառկիլը՝ կենսական ուժին, երկար դիտելը՝ արեան: Չարտօթիլ, տիպութիւնը եւ մեղք մատուցելը վնասակար են, ինչպէս մեծ ուրախութիւնն ու զուարճանքը:

ՍՈՒՐՃԻ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սուրճի հայրենիքը Եթովպիան է, ուր պահպանուած են անոր վայրի մացառուտները: Սուրճի ծառը առաջին անգամ նկարագրած է գերմանացի բժիշկ Ռաուֆելֆը (1573 թուականին): Արեւմտեան Հայաստանի մէջ սուրճի ըմպելին տարածուած է 16-րդ դարու սկիզբը: Հետագային կան է, որ 1672-ին Ֆրանսայի մէջ բացուած առաջին սրճարանին տէրը՝ Փասկալ անունով, հայ եղած է:

Հիւսիսային Ամերիկայի մէջ սուրճ օգտագործած են 1670-ին: Սուրճը կը մշակուի 17-րդ դարէն Եմենի մէջ: Այդ երկրի Մոգոս նաւահանգիստէն անիկա արտահանուած է աշխարհով մէկ: 20-րդ դարու սկիզբը սուրճ տեղափոխող նաւերէն մէկուն բեռնախցիկը փոթորիկի պատճառով ջուրով լեցուած է: Բեռնաթափուելէն յետոյ նկատած են, որ այդ սուրճէն պատրաստուած ըմպելիի ազդեցութիւնը աւելի թոյլ է: Այդ պատահականութեան շնորհիւ սուրճը ստացած է աւելի մեծ տարածում, քանի որ քաֆէինի փոքր տոկոս պարունակող սուրճը կրնային խմել նաեւ առողջական խնդիրներ ունեցող մարդիկ: Եւ այսպէս. եթէ կ'ուզէք տնային պայմաններու մէջ նուազեցնել քաֆէինի տոկոսը, ուստի հատիկները որոշ ժամանակ պահեցէք ջուրի մէջ: Քիչ անց անոնք պիտի ուռին: Ջուրէն առանձնացուցէք հատիկները եւ լուացէք հոսող ջուրի տակ: Քաֆէինի պարունակութիւնը չմշակուած հատիկներուն մէջ կը տատանուի:

Լուծուող սուրճի մէջ քաֆէինի պարունակութիւնը աւելի բարձր է: Որոշ հետազոտողներ կը հաւաստիացնեն, որ լուծուող սուրճը բարենպաստ ներգործութիւն ունի մարմնի վրայ, որ անիկա ցանկալի է խմել կաթի կամ սերուցքի հետ խառնած վիճակով, սակայն ոչ անօթի ստամոքսին: Սուրճէն պատրաստուած ըմպելիները արտայայտուած բարեբար ազդեցութիւն ունին հիփոթոնիայով հիւանդներու վրայ: Ժխտական ազդեցութիւն կ'ունենան սիրտանօթային որոշ հիւանդութիւններու, 12-մատնեայ աղիքի եւ ստամոքսի խոցի պարագային: Որեւէ հիւանդութեան պարագային սուրճի չափաբաժինը պէտք է որոշէ բժիշկը: Սուրճը կը պարունակէ քաֆէին (1,2%), ջուր (12%), շաքարանիւթեր

(8%), սրճաթթու (9%), բջիջանիւթ (25%), ազոթային միացութիւններ (13%), ֆենոլային միացութիւններ, պիրիդին, քացախաթթու, վիթամին PP, E եւ այլ նիւթեր: Բովելէն յետոյ ճարպերու, ազոթային միացութիւններու եւ քաֆէինի պարունակութիւնը քիչ մը կ'աւելնայ, իսկ ջուրի, շաքարի, սրճաթթուի պարունակութիւնը կ'իջնէ 2-4 անգամ: Նիւթերը (վիթամին PP) կը մասնակցի ուժանիւթի արտադրման բջիջներուն մէջ:

Սուրճը կը նուազեցնէ քուլեսթերոլի եւ ճարպի պարունակութիւնը արեան մէջ, կը լայնցնէ արիւնատար անօթները եւ կ'իջեցնէ ճնշումը, կը հանգստացնէ գլխացաւը, կը վերացնէ աղմուկը ականջներուն մէջ, օգտակար է գլխապտոյտի պարագային, կը բարելաւէ մարտնչութիւնը, կը կանխէ սրտի կաթուածները:

Խորհուրդ կը տրուի քրոնիկ հիւանդութիւններու՝ լեարդի ցիրոցի, չարորակ ուռուցքներու, յատկապէս շագանակազդէի ատենուցի, փանքրէատի պարագային: Քաֆէինի ցած պարունակութիւնը առանձնապէս չ'ազդեր սուրճի բարեբար յատկութիւններուն վրայ: Նիւթերը կ'օգնէ նաեւ յոգնածութեան, մկանային թուլութեան, վատ ախորժակի, սթոմախիտի, լինտերու հիւանդութիւններու, սրտխառնուքի պարագային: Կը վերացնէ բերանի տհաճ համը եւ հոտը:

Սիսեռը շատ լաւ կը համակցուի սուրճի հետ, կ'աւելցնէ սուրճի օգտակար ազդեցութիւնը: Սուրճի եւ սիսեռի յարաբերութիւնը խառնուրդի մէջ կ'որոշէ խմողը: Շատ կարեւոր է նիւթերի հետեւեալ յատկութիւնը. Կը նպաստէ սերոթինի արտադրութեան, կը պարզեւէ առողջ քուն եւ երջանկութեան զգացողութիւնը: Վերջերս հետազոտութիւններու միջոցով պարզուած է, որ սուրճի լուծանքներու (իւլային, ջրային, սփիթային) կը բերէ թուքի արտադրութեանէն յառաջացող կազերու նուազում: Այդ կազերը բաւական տհաճ հոտ ունին: Սովորական ձեւով պատրաստուած սեւ սուրճը չի յանգեցնէր նման արդիւնքի: Գիտնականները փորձեր կը կատարեն, որպէսզի ստանան տհաճ հոտերը վերացնող բուրմունք՝ սուրճի հատիկներէն:

ՈՎ՝ ՈՒՄ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՁԵԼԱՈՐՈՒՄ Է

Շարունակուած էջ 2-էն
Սերժ Սարգսեանն անձամբ է զգուշացնել, որ նման բան չի կարելի: Առանձին արտօնեալներ իսա էլ կայ՝ ի դէմս որոշ մարզպետների, գեներալներին, նախարարներին, որոնց Սերժ Սարգսեանը գրեթէ ամէն ինչ է ներում, բայց նրանք

բացառապէս գործիք են նախագահի ձեռքում ու իշխանութեան դերակատար լինելուց բաւական հեռու են: Այսպիսով՝ ակնյայտ է ներքինի անհանգստացումը իր ծիրում էլ ընթանալու են ապագայի քաղաքական գործընթացները:

«ՀԱՅԵԼԻ»

ՎԱՐՉՈՒ ՄՈՒՅ
ՓԱՍՍԻՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԳԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԳԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԳԵՈՒԳՆԵՆԵԼ (626) 797-7680

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ Մարտ 21-Ապրիլ 19
Այս շաբաթ բարեկամի մը վեհամեծնութիւնը եւ առատածեռնութիւնը մեծ ազդեցութիւն պիտի ձգէ վրայ: Սիրելիի մը հետ ունեցած հաստատ կապերդ անելի պիտի ամրապնդուին, շնորհիւ քու անկեղծութեանդ: Գրաւէր մը պիտի ստանաս: Բախտաւոր թիւերդ են: 4,11,15,20,25

ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20
Բժշկական քննութիւններուդ հետեւելու լաւ ժամանակը հիմա է: Մասնաւոր պատճառ մը չ'ունիս կեդրոնաճալու անձնական եւ բարեսիրական մտահոգութիւններով: Կեանքի դրական կողմերուն նայէ եւ մի յուսահատիր: Բախտաւոր թիւերդ են: 7,14,20,30,31

ԵՐԿՈՒՐՈՒԵԱԿ Մայիս 20-Յունիս 20
Ապահով զգալու համար՝ պէտք ունիս սիրելիի մը ժպտացող դէմքին եւ հանդարտեցուցիչ ձայնին: Բարեկամի մը ճամբորդութիւնը քեզ շատ պիտի վշտացնէ: Կարելոր որոշումներ պիտի առնես ապագայիդ նկատմամբ: Բախտաւոր թիւերդ են: 1,15,21,23,35

ԽԵՑՁԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22
Պարտականութիւններդ ընդհանրապէս կը կատարես ուրիշներու բարօրութեան համար, ժամանակն է որ դուն քու վրայդ հոգաս եւ դուն քեզ գոհացնես: Երդում մը ըրած ես եւ լրջօրէն նկատի կ'առնես այդ իրավիճակը, խոստումդ յարգած մնացիր: Բախտաւոր թիւերդ են: 3,12,24,30,35

ԱՌԻԻԾ Յուլիս 23-Օգոստոս 22
Կեանքդ շուրջիցներուդ հետ անելի ներդաշնակ պահելու համար, յաճախ սխալ որոշումներ կ'առնես եւ կը ծախտդ: Կարողութիւններդ շատ են, քեզի կը մնայ լաւ մտածել եւ գործադրել: Սնունդիդ լաւ հոգ տանելու ես: Բախտաւոր թիւերդ են: 10,18,27,31,33

ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Նոր տարուան առած որոշումներդ թէեւ կրնան լուրջ չ'ըլլալ, սակայն կարելոր է որ զանոնք պահես եւ հաստատ մնաս անոնց վրայ: Գործիդ մէջ շարունակական հարց մը պիտի սկսի դժգոհութեան առիթներ բանալու գործընկերներուդ միջեւ: Բախտաւոր թիւերդ են: 14,20,25,29,34

ԿՇԻՈՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Ուել բան որ վախով կ'ընես քեզի շատ նեղութիւն կը պատճառէ: Հաստատ կամք ունեցիր եւ հաւատա՝ դուն քեզի: Գէշ սովորութիւններդ փոխէ եւ նոր ու օգտակար վերաբերմունքներ կազմէ շուրջիցներուդ հետ: Շատ զբաղ շաբաթավերջ մը պիտի ունենաս: Բախտաւոր թիւերդ են: 7,14,25,33,34

ԿԱՐԻԾ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Անցեալի ըրած սխալներդ ուղեցոյց ունենալով՝ կը խուսափիս ծախտողութիւններէ եւ դուն քեզի խոստացած ես անպայման յաջողիլ: Ահրելի ճշմարտութիւն մը գիտես բարեկամի մը մասին որը քեզ կը ստիպէ հեռանալ այդ անձէն: Օրերդ ուրախութեամբ անցուր: Բախտաւոր թիւերդ են: 6,14,17,26,32

ԱՂԵՂՆԱԲՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Կամքդ ու գործելակերպդ հիացում կը պատճառեն բարեկամներուդ որոնք կը փորձեն հետեւիլ օրինակիդ: Ընտանեկան կեանքդ շատ լաւ ընթացքի մէջ է, սակայն լաւ կ'ընես եթէ քիչ մը անելի մտիկ ընես կեանքի ընկերոջդ պահանջներուն: Բախտաւոր թիւերդ են: 1,24,29,34,36

ԱՅԾԵՂՁԻՐ Դեկտեմբեր 22-Յունուար 19
Խանդավառուած ես նոր ծրագիրներով, որոնք գործիդ բարելաւման համար շատ կենսական են: Չիրքերդ կրնան շատ մը ցեւերով գործածել նպատակիդ հասնելու համար: Հանդարտ պահերդ օգտագործէ ընթերցելու եւ գիտելիքներու պաշարդ անելցնելու: Բախտաւոր թիւերդ են: 2,9,13,24,26

ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18
Սիրելիէ մը ստացուած նամակ մը քեզ շատ պիտի ներշնչէ անելի մօտէն հետեւելու կեանքի իրադարձութիւններուն: Անհամբեր կը սպասես ամրան՝ որ կատարես սրտիդ փափաքները եւ հարազատի մը հետ ժամանակ անցընես: Օրուայ ընելիքներդ դասաւորէ: Բախտաւոր թիւերդ են: 3,8,16,26,31

ՉՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20
Քեզի նշանակուած պարտականութիւններդ լիով կը կատարես եւ գնահատանքի կ'արժանանաս: Շատ լաւ կը խորհրդածես եւ կուսումնասիրես ծրագիրներդ որպէսզի չզոյջաս: Համբերութիւնդ շատ կը տպաւորէ գործընկերներդ որոնք չեն կրնար քեզի նմանիլ: Բախտաւոր թիւերդ են: 15,20,24,33,34

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ Է ՊԵՏՔ

Շարունակուած էջ 13-էն

մեծ ջանքեր են գործադրուած հայապահպանման գործում, անյաղթահարելի հոսանքի առաջ են կանգնած: Կայ դժուար երկու միջոց: Առաջինը հայրենադարձութիւնն է, որի մասին դեռ շուտ է որոշումներ կայացնելը բոլորին հասկանալի պատճառներով: Երկրորդը՝ հայկական դպրոցների թիւը շատացնելը: Սփիւռքի հայապահպանման համար մենք բաւարար դպրոցներ չունենք Լոս Անճելոսում, իսկ եղած դպրոցներում էլ միայն անգլերէն են խօսում, բոլոր աւարկաների դասերը անցնում են անգլերէնով, բացի հայերէնից, կրօնից ու հայոց պատմութիւնից, որպէսզի «լեզուական շեշտաւորում (ակցենտ)» չունենան ու, իբր թէ, հեշտ ընդունեն համալսարան: Հայաստանում հայկական դպրոցներում առաջին դասարանից սկսած հայերէնի հետ ուսուցիչն էին անցնում եւ աւարտելուց յետոյ ոչ մէկը շեշտաւորում չէր ունենում: Եթէ Լոս Անճելոսի հայկական դպրոցներում աշակերտը անգլերէնը սկսում է սովորել հայերէնի հետ առաջին դասարանից, նա շեշտաւորում չպէտք է ունենայ, եթէ նոյնիսկ շեշտաւորում ունենայ, լաւ սովորող ուսանողը կ'ընդունուի համալսարան:

Սփիւռքում հայապահպանման գլխաւոր միջոցներից մէկը պէտք է լինի հայկական դպրոցների շատացումը: Այսօր Լոս Անճելոսում անելի շատ եկեղեցիներ կան եւ

կառուցուած են նորերը, քան հայկական դպրոցներ: Եկեղեցին անհրաժեշտ է մարդու հոգու մաքրութեան համար, բայց նա չի կարող փրկել ուժացող հային դպրոցի նման, որտեղ երեխան կազմաւորուած է, աստիճանաբար դիտակցում իր ինքնութիւնը՝ ապահովելով ազգապահպանումը: Հետեւաբար, պէտք է մտածել դպրոցների շատացման մասին Լոս Անճելոսում, որը բաւական բարդ խնդիր է:

Միգրացի հայաստանի կառավարութեան եւ Ամերիկայի հայկական կառույցների միացեալ ուժերով գտնել բանալին՝ Ամերիկայի պետութեան ղեկավարութեանը համոզելու, որ նա յանձն առնի հայկական դպրոցների ծախսերը, ինչպէս ամերիկեան դպրոցներինը եւ նաեւ օգնի հայկական նոր դպրոցների կառուցման: Ամերիկայում, այդ թւում Լոս Անճելոսում ունենք բաւական հարուստ ազգասէր հայեր, որոնք ի սէր ազգապահպանման կարծում են, որ քսակները կը բանան նոր դպրոցներ կառուցելու այդ սրբազան գործի համար:

Սա ուղղակի առաջարկ է, որը շափազանց դժուար է լուծելը, բայց ժողովրդական առաձն ասում է. «Փորձը փորձանք չի», «Գեղ կանգնի գերան կը կտորի»...:

Հայապահպանումը ամէն գնով պէտք է իրագործուի, պահպանելով նաեւ արեւմտահայերէնը իր մաքրութեամբ, եւ երբ երկու հայ հանդիպեն իրար, աշխատեն խօսել հայերէն, որպէսզի հայոց լեզուն ծաղկի ու բարգաւաճի:

«ՊՏՈՅՏ ՍԸ ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒՆ ՄԷՁ»

Շարունակուած էջ 15-էն

Իարքական իր պարտականութիւնները կատարել, Պատրիարքական Փոխանորդ Աթէշեան Սրբազանը կը վարէ Պատրիարքարանի ընթացիկ գործերը:

Շատ լսած եւ կարդացած էինք Գոմ Գափուի Պատրարքարանին մասին: Երբ մեր պասը մեզ Պատրիարքարանին առջեւ բերաւ, դող մը անցաւ մէջէն: 600 տարուայ փոթորկալից պատմութիւն ունեցող հաստատութեան մը առջեւ կեցած էինք: Ճիշդ է որ դարպասը բաց էր բայց շէնքին ճակատը «Պատրիարքութիւն Հայոց 1461» փորագրութիւնը իր կերպով շատ խորունկ իմաստ մը ունէր ինծի համար:

Պատրիարքարանի ճիշդ դիմացը կը գտնուի Սբ. Աստուածածին Եկեղեցին: Երբ եկեղեցին դարպասէն ներս մտանք, հանդիպեցանք երկու Մելգոնեանցի աշակերտներու, որոնք մօտակալ Գնալը Ատալէն եկած էին իրենց Մելգոնեանի ուսուցիչներուն եւ դասընկերներուն հանդիպելու: Ջերմ խօսակցութիւններէ, յիշատակներու պատմումներէ եւ նկարուելէ ետք մտանք Սբ. Աստուածածին եկեղեցին:

Սբ. Աստուածածին Եկեղեցին

Պատրարքութեան եւ Պատրիարքարանի վայել, շքեղ եկեղեցի մըն էր:

Սբ. Աստուածածին Եկեղեցին հայերուն տրուեցաւ Օսմանեան Սուլթաններու կողմէ: 1641 թուականէն սկսեալ ան կը ծառայէ որպէս Պատրիարքարանի եկեղեցին: 1645-ի, 1718-ի եւ 1762-ի հրդեհներուն պատճառով այրելէն ետք վերաշինուած է: Փետրուար 2, 1828-ի Սուլթան Մահմուտ Բ-ի հրովարտակով Սբ. Աստուածածին, Սբ. Խաչ եւ Սբ. Որդւոց Որոտան եկեղեցիները շինուեցան Գոմ Գափուի սկզբնական վայրին վրայ եւ Հոկտեմբեր 14, 1828 օժով տեղի ունեցաւ: Համաշխարհային Առաջին Պատերազմին Սրբոց Որոտան եկեղեցին փակուեցաւ, սակայն նորոգութիւններէ ետք 2011-ին վերաբացուեցաւ:

1719-ին, Յովհաննէս Կոլոտ Եպիսկոպոսին ջանքերով, Պատրիարքարանի հարեւանութեամբ շինուեցաւ դպրոց մը որ 1856-ի Չօճափաշայի հրդեհին պատրիարքարանի շէնքին հետ այրեցաւ: Չորս տարի ետք, Պեգճեան Գազազ Արթին Ամիրայի նուիրատուութեամբ դպրոցը վերաշինուեցաւ եւ կոչուեցաւ «Պեգճեան Մայր Վարժարան»:

Սբ. Աստուածածին Եկեղեցին իր ոսկեգօծ խորաններով, պատերուն վրայի սրբապատկերներով, պատրիարքներու արձանագրութիւններով եւ այլ եկեղեցավայել անկիւններով եւ զարդարանքներով Պատրիարքարանին եւ հայութեան պատիւ բերող շինութիւն մըն էր:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ-ՖԵՐՄԱՆԵԱՆ)

Լուլու (Խայեան-Ֆերմանեանի մահուան տասնվեցերորդ տարեկիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 25 Յունուար, 2016ին, Ս. Պետրոս Հայցող Առաքելական Եկեղեցու մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Սգակիրներ՝
Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան
Վիզէն Գուլումեան

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒՀԻ ԿԻՒՏԵՇԵԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ եւ Անի Պէքմէզճեաններ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար զաւակներուն՝ Յարութ եւ Յակոբ Կիւտէշեաններուն:

Առ այդ \$50 կը նուիրեն «Մասիս»ին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կիւտէշեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց մօր Ազատուհի Կիւտէշեանի մահուան առթիւ այցելութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ: Մասնաւորաբար Հ.Մ.Մ.ի վարչութեան եւ «Մասիս» շաբաթաթերթին:

ԵՐՁԱՆ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Շարունակուած էջ 14-էն

րիմ եղիր մինչեւ վերջ: Ողջ անուն ունիս բայց մեռած ես. արթնցիր եւ զօրացուր մնացեալ կարողութիւններդ: Որովհետեւ համբերեցիր, ես ալ քեզի պիտի պահեմ փորձութեան ժամէն որ պիտի գայ ամբողջ աշխարհի վրայ: Եօթներորդ պատգամը եզրայանգիչն է վերեւ յիշուածներուն ու կը լրացնէ այնքան սրտառուչ կերպով, թէ Ահաւասիկ դրանդ առջեւ կեցած կը բախեմ դուռդ, եթէ մէկը լսէ ձայնս եւ բանայ դուռը, ներս կը մտնեմ եւ անոր հետ ընթրիք կ'ընեմ:

Քրիստոս կ'ուզէ դէմ յանդիման գալ իր հետեւորդներուն, եթէ դուռը բացուի իրեն համար: Նախորդ Պատգամները պատրաստութեան, զգաստութեան, եւ հաւատարմութեան պարտքը կը դնեն հետեւորդ քրիստոնեային վրայ, եւ երբ Քրիստոս դուռը կը բախէ ներս մտնելու ցանկութեամբ, մեծագոյն շնորհք կ'ընէ մարդուն: Սակայն դուռը միայն ներսէն կը բացուի, եւ գայն բացողը պիտի տայ առիթը Քրիստոսի, որ նոյն ինքն է որ կ'առաջարկէ ներս մտնել ու միասին ընթրիքի նստիլ:

Ուրիշ առիթով, Լաւորդիկէի ուղղուած պատգամին մէջ Քրիստոս կ'ըսէ. «Գիտեմ գործերդ, ոչ ցուրտ ես եւ ոչ տաք, դուն գաղջ ես, ոչ տաք եւ ոչ ցուրտ», որուն շնորհք Պատրիարք կուտայ սա մեկնաբանութիւնը: Քրիստոնեային համար միջին ճամբայ չկայ. կայ միայն շիտակ ճամբայ եւ կամ սխալ ճամբայ, լայն ճամբայ եւ նեղ ճամբայ: Ըստուածն այն է թէ կայնեալ պաշտութեան եւ քրիստոնեայնեան միջեւ միջին ճամբայ չկայ, եւ կամ բարոյ կեանքին միջեւ, ինչպէս նաեւ հոգեւոր եւ աշխարհիկ կեանքին միջեւ գաղջ եւ միջին փախուստի ճամբայ չկայ: Ուրեմն, շիտակ ճամբան Մէկ է, եւ սխալ ճամբան հարիւրաւոր, որքան որ մարդիկ բանան զանոնք՝ դէպի մոլորութիւն եւ կորուստ:

Տեսէք Պատրիարք Հօր հատու բացատրութիւնը, երբ կ'ըսէ թէ՛ նեղ ճամբան որ Աւետարաններէն կուգայ, մէկ հոգի միայն կրնայ քալել, ոչ իսկ երկու հոգի քով քովի, այլ միայն ետեւ ետեւի իբրեւ նոյն նպատակին գացող մարդիկ, քալելով իրարու հետքերու վրայէն: Սխալի եւ շիտակի միջեւ համաձայնութիւնը գաղջ կրօնք կը ստեղծէ, որ ինքնին սիրտխառնուք կը պատճառէ: Ո՛վ կ'ուզէ գաղջ ջուր խմել: Գիտնալով երկուքին, այսինքն շիտակին ու սխալին ինչ ըլլալը, եւ սակայն չգործադրել շիտակը անտեսելով սխալը, շատ աւելի ծանր մեղք է, կ'ըսէ Շնորհք Պատրիարք, քան թէ երկուքին տարբերութիւնը բնաւ չգիտնալն ու կեղծաւորաբար ապրիլը:

Մեծ Պառնոս Կիրակիներու Նղթան երջանկայիշատակ Շնորհք Պատրիարք Հօր երկրորդ գիրքը ՄԵԾ ՊԱՆՈՅ ԿԻՐԱԿԻՆԵՐՈՒ ՈՍԿԵԱՅ ՇՆԹԱՆ է, որ հաւատացեալներուն աւելի սրտի մօտ եւ հասկնալի Աւետարանական Առակներու օղակներն են, առանձինն այնքան իմաստալից որքան իմաստալից բոլորը միասնաբար: Կը սկսի Երջանկութեամբ, կ'անցնի անկուծի եւ արտաքսուծի բաւիդ-

ներէն, մեղքէն վերադարձի ճամբան կը հարթուի, հաւատարմութեան ու մշտնջենական աղօթքի դարպասներէն, յանգելու համար Քրիստոսի Երկրորդ Գալուստին: Իր կանխաբանութեան մէջ հեղինակ Պատրիարքը իսկական Պահքի մասին կենսական գիտելիքներ կը հաղորդէ, Պահքեցողութիւն որ ընդունելի է Աստուծոյ առջեւ, ոչ կեղծ ցուցարարութեամբ, որուն հիմքը կը գտնուի այնքան պարզ կերպով բանաձեւուած Եսայի Մարգարէութեան մէջ, Գլ. 58, Քրիստոսէ հարիւրաւոր տարիներ առաջ, զոր Պատրիարք Հայրը որպէս նախազիտելիք մէջբերած է գիրքին սկիզբը:

Հիանալի մեկնութիւն մըն է Եսայի Մարգարէի այդ լման գլուխը, անծանօթ նոյնիսկ մեզի եկեղեցականներու: Կարծէք այդ ամենէն հին վկայութիւնը իրաւ պահեցողութեան մասին ճիշդ այսօրուան համար գրուած ըլլայ, ներկայի պահեցողութեան բարոյա-կան հրամայականով: Ամէնքս անպայման կարողու ենք այդ գլուխը որ կը գտնուի այս գիրքին սկիզբը, երկու լեզուներով, ուր հրեայ ժողովուրդը կը գանգատի Եհովա Աստծոյն թէ պահեցողութիւն կ'ընեն եւ սակայն «Դուն չես լսեր մեզի» աղաղակելով: Աստուած կը պատասխանէ Եսայի Մարգարէի բերնով եւ կ'ըսէ.

«Զեմ լսեր որովհետեւ ձեր պահքի օրերուն ձեր անձնական կամքին միայն կը ծառայէք. ձեր ձեռքին տակ գտնուող ստորագրուներուն բերտ վերաբերմունք ցոյց կուտաք: Այդպիսի պահք չէ իմ ուզածս: Իմ ուզած պահքը անարդարութեան կնճիռը քակելն է, ու վաճառքի ատեն գործադրուած խարդախութեանց վերջ տալն է, նեղութեան եւ բռնութեան մատնուածները ազատելն է, անիրաւ մուրհակները պատուելն է, եւ հացդ անթիներուն հետ բաժնելն է: Այն ատեն քու լոյսդ արշալոյսի պէս պիտի ծագի եւ Աստուծոյ փառքը քեզ պիտի շրջափակէ: Այս է իմ ուզած պահեցողութիւնը ձեզմէ:»

Մեծ Պահք Կիրակիները Պատրիարք Հեղինակը Պահք Կիրակիներու ոսկի շղթային օղակները հատիկ հատիկ կը քակէ իր իմաստուն, հոգեւոր եւ աստուածահաճոյ պարուսներով, եւ մեզ մի քիչ աւելի գիտակից կը դարձնէ: Բուն Բարեկենդանի Երջանկութեան Կիրակին կը մեկնաբանէ որպէս իսկական երջանկութիւն, բան մը որ յարաբերական է կ'ըսէ: Ամէն մարդ երջանկութեան կը հասնի իր նախընտրած ձեւով: Աշխատասէրը իր առօրեայ աշխատանքին ու արդար վաստակին հիմամբ երջանկի անձն է, մինչդեռ երջանկի է նաեւ ծոյլը որ զեզերելով ուրիշին ժամերուն արգելք կ'ըլլայ համբիւր ձեռքին ու ժամերը հաշուելով, ապարդիւն կեանք մը ապրելով: Երջանկի է նաեւ բախտախաղի մոլին, որ կը կորսնցնէ ունեցածը եւ հոգն անգամ չըլլար, որքան ատեն որ երջանկի է կարճ ատենուան համար միայն, մինչեւ ունեցածն ալ հատնի: Այս վերջինները խաբեբայ «օձին» գոհներն են անտարակոյս:

Դրախտային երջանկութենէն ինկան Ազամ ու Եւա, եւ արտաքսուեցան: Այս է Երկրորդ Կիրակիի դասը, որմէ կը հասկնանք թէ երկուքին պատմութիւնը իւրաբանաբար իրապատմութիւնն է: Ո՛վ չէ ինկած այսպէս կամ այնպէս: Բոլորս ալ: Արգիլեալ պտուղի մասին

Շնորհք Պատրիարք կուտայ ամենէն տրամաբանական եւ դաստիարակիչ մեկնութիւնը: Դրախտային մէջ կային երկու տեսակ ծառեր, «կեանքի ծառը», եւ «բարիի ու չարի գիտութեան ծառը» իրենց պտուղներով: Երկրորդ ծառի պտուղն էր արգիլուած պտուղը, որ կը նշանակէ թէ Աստուծոյ պատուիրաններն են մեր առջեւ դրուած, դրական պատուիրանները, թէ գանոնք կատարեցէք, եւ ժխտականները՝ թէ մի՛ մօտենաք անոնց, մէկ կողմէն պաշտէ՛ միակ Աստուածդ, եւ պատուէ՛ հայրդ ու մայրդ, եւ միւս կողմէ, մի՛ սուտ վկայեր, մի՛ գողնար, եւ մի՛ սպաններ: Ուրեմն, հարցումին պատասխանը թէ «ինչ է արգիլեալ պտուղը», Աստուծոյ երկրորդ տեսակի ժխտական պատուիրաններն են արգիլեալ պտուղները՝ «մի՛» հրամայականով:

Սակայն Երրորդ Կիրակիի Անառակ Որդիին դարձով միայն կարելի պիտի ըլլար ազատարար դարձը, լիովին եւ վճռական ապաշխարանքով եւ զղջումով: Կամքի ուժը հակընդդէմ պայքարին կշիռը պէտք է ըլլայ: Պատրիարք Սրբազան շեշտը կը դնէ Անառակին վճռութիւն վրայ, յայտնաբերելով որ վատնելը վատ բառէն կազմուած է, որմէ աւելի գէշ մարդ չըլլար: Վատնումը ուրիշին արդար վատակիւն փճացումն է վատ մարդուն ձեռքով: Հայրը տուաւ իր կրտսեր որդիին բաժինը, եւ որդին վատ մարդ եղաւ, քանզի իր հօր բարի եւ արդար վատակը փճացուց, եղաւ անտունի, աղքատ, եւ բարեկամները թողքեցին զինք առանձին, մինչեւ այն ատեն երբ վերադարձը դէպի հօր տունը եղաւ միակ փրկութեան լաստը:

Շնորհք Պատրիարք իրաւացի կերպով կը հաստատէ թէ Աւետարանական այս մեղքը, վատնումը, չէ անցած մեր ժամագիրքի մեղքերու շարքին, ուր անգամութիւնը, յանգստութիւնը եւ շաշտութիւնը անցած են, ճիշդ այն մեղքերը զորս Անառակը գործեց: Անոնք անունով չեն յիշուած Աւետարաններուն մէջ, մինչդեռ անունով յիշուածը միայն վատնեաց զինչս իւրն է: Մեղք է վատնումը, եւ մեր քաջ եւ խղճամիտ Շնորհք Պատրիարք Հայրը չվարանի ըսելու թէ ոչ յարաժամուած է փճացնելու իրեն չպատկանածը, քանի որ մեր նիւթական ինչքն ու բարոյական կարողութիւնները տաղանդներ են, որոնք յարգուելու են աւետարանական իմաստալից բառով, եւ ոչ օգտագործուելու յետին նպատակներու հաշտոյն:

Յաջորդող Կիրակիները անպարկեշտ տնտեսին ու անիրաւ դատաւորին ժխտական եւ մերժելի արարքներուն անդրադարձն է, ոչ թէ նմանութեամբ, այլ բազմապատկութեամբ: Եթէ մարդոց մէջ կան այդպիսի անարգ մարդիկ, անոնց դէմ Աստուածային գերակայութիւնը կ'իշխէ՛ իրենց չար եւ նենգ արարքներու բազմապատկութեամբ: Կեղքաւորեմ իմ խօսքը Պատրիարք Հօր սա իմաստալից բառերով. «Իրաց այս վիճակին մէջ մեղքը իր բնական պատիժը կը պարունակէ իր մէջ: Հաշիշամոլը, խաղամոլը, գինեմոլը, կնամոլը, անպատճառ պիտի պատժուին իրենց արարքի մտրակով, նիւթապէս եւ ֆիզիքապէս, այսինքն դրամը վատնելով, առողջութիւնը կորսնցնելով, եւ անառակները բարոյական կորուստի մատնուելով: Բաց աստի, ամէն մեղանչական արարք արհամարհանք է Աստուծոյ իմաստութեան եւ սիրոյն դէմ»:

ԵՈՒՐԱ ՄՈՎԱՍԻՍԵԱՆ. ՎԱՂՈՒՑ ԷՒ ՑԱՆԿԱՆՈՒՄ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ «ՌԷԱԼ ՍՈԼՈ ԼԵՅՔ»

Մոսկովայի «Սպարտակից» հեռացած Եուրա Մովսիսեանը պատմել է, որ վաղուց է ցանկացել վերադառնալ ամերիկեան «Ռէալ Սոլթ Լէյք»:



«Վաղուց էի սպասում վերադառնալու հնարաւորութեան: Ակնյայտ է, որ այս ակումբն առաջնային տարբերակ էր ինձ համար, քանի որ այստեղ ես ու ընտանիքս միշտ հիանալի ենք զգացել մեզ: Երևտայում ես տանն եմ: Ցանկանում եմ տիտղոսներ նուաճել «Ռէալ Սոլթ Լէյքի» հետ եւ դառնալ ակումբի զարգացման գործընթացի մի մասը: Ես թիմի մի մասն էի, երբ մենք դարձանք չեմպիոն: Ցանկանում եմ այդ փորձը կրկնել շատ անգամներ», - Մովսիսեանի խօսքը մէջբերում է ամերիկեան ակումբի կայքը:

Յիշեցնենք, որ MLS-ի ներկայացուցիչը մինչեւ 2016-ի Դեկտեմբերի 1-ը վարձակալել է Հայաստանի հաւաքականի 28-ամեայ յարձակուողին, որը «Ռէալ Սոլթ Լէյքում» հանդէս եկել է 2007-2009-ը:

ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ ՄԻԻԹԱՐԵԱՆԻՆ ԸՆԴԳՐԿԵԼ ԵՆ ԲՈՒՆԴԵՍԼԻԳԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՅԱԲԱՔԱԿԱՆՈՒՄ

Դորտմունդի «Բորուսիայի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը Բունդեսլիգայի պաշտօնական կայքում անցկացուած հարցման արդիւնքում ընդգրկուել է Գերմանիայի ընթացիկ առաջնութեան առաջին շրջանի խորհրդանշական հաւաքականում: Երկրպագուները թիմում ընդգրկել են միայն «Բորուսիայի» ու Միւնխենի «Բաիարիայի» ֆուտպոլիստներին, ինչպէս նաեւ Լեւերկուզենի «Բայերի» մեքսիկացի յարձակուող Ջիչարիտոյին:



Դարպասապահ. Մանուէլ Նոյեր («Բաւարիա»):
Պաշտպաններ. Ֆիլիպ Լամ («Բավարիա»), Խերոմ Բատենգ («Բավարիա»), Մատտ Հոմմելս («Բորուսիա Դ.»), Մարսել Շմելցեր («Բորուսիա Դ.»):
Կիսապաշտպաններ. Իլկայ Գիւնդոգան («Բորուսիա Դ.»), Հենրիխ Մխիթարեան («Բորուսիա Դ.»), Դուզլաս Կոստա («Բավարիա»), Թոմաս Միւլլեր («Բավարիա»):
Ցարձակուողներ. Պյեր-էմերիկ Օբամեկանգ («Բորուսիա Դ.»), Ջիչարիտո («Բայեր»):
Գլխաւոր մարզիչ՝ Թոմաս Տուխել («Բորուսիա Դ.»):
Յիշեցնենք, որ աւելի վաղ Հենրիխ Մխիթարեանը ճանաչուել էր Գերմանիայի ընթացիկ առաջնութեան առաջին շրջանի լաւագոյն աջ կիսապաշտպան՝ շրջանցելով Լերոյ Սանչին («Շալկէ»), Կինգսլի Կոմանին («Բավարիա») եւ Ռաուլ Բոբադիլեային («Աուգսբուրգ»):
26-ամեայ կիսապաշտպանը Գերմանիայի ընթացիկ առաջնութեան առաջին շրջանի խորհրդանշական հաւաքականում ընդգրկուել էր նաեւ Goal.com-ի, Eurosport.de-ի, Whoscored.com-ի եւ Transfermarkt-ի վարկածով: Գերմանիայի այս առաջնութեան 17 տուրերում Մխիթարեանը մասնակցել է 16 խաղի՝ դառնալով 6 գոլի ու 8 գոլային փոխանցման հեղինակ:

ՄԱՐԿՈՍ ՊԻՋԵԼԻՆ ԿԸ ԽԱՂՅ ՍԱՌԴԵԱՆ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ

Ղ ա զ ա խ ա կ ա ն «Ակտոբէից» հեռացած Մարկոս Պիզելին կարիերան կը շարունակի ֆուտպոլի Սաուդեան Արաբիայում հանդէս եկող «Ալ Ռաէդում», հաղորդում է ակումբի թուրքերեան էջը:



Հայաստանի հաւաքականի 31-ամեայ կիսապաշտպանը «Ալ Ռաէդի» հետ կնքել է պայմանագիր, որի մանրամասները չեն հրատարակուում:

Յիշեցնենք, որ Մարկոս Պիզելին 2014-ից խաղում էր «Ակտոբէում», որից հեռացել էր ազատ գործակալի կարգավիճակով: Ղազախական ակումբի կազմում կիսապաշտպանը մասնակցել է 60 խաղի եւ դարձել 12 կոլի հեղինակ:

Սաուդեան Արաբիայի առաջնութեան 13-րդ տուրից յետոյ «Ալ Ռաէդը» 10 միաւորով 12-րդ տեղում է: Առաջնութեանը մասնակցում են 14 թիմեր:

ՌՈՒՆԻՆ ԳԵՐԱՋԱՆՑԵՑ ԱՆՐԻԻ ՌԵԿՈՐԴ

«Մանչեսթեր Եունայթեդի» յարձակուող Ռէյն Ռունին, յաղթական գոլի հեղինակ դառնալով «Լիւերպոլի» դէմ Անգլիայի առաջնութեան 22-րդ տուրի արտագնայ խաղում, սահմանել է ռեկորդ, գրում է Opta-ն:



30-ամեայ անգլիացին դարձել է Պրէմիեր լիգայում մէկ ակումբի կազմում ամենաշատ գոլ խփած ֆուտբոլիստը: Դա Անգլիայի հաւաքականի աւագի 176-րդ գոլն էր Պրէմիեր լիգայում:

Այդ ցուցանիշով նախորդ ռեկորդը պատկանում էր ֆրանսացի լեգենդար յարձակուող Թիերի Անրիին, որը 175 գոլ էր խփել Լոնդոնի «Արսենալի» կազմում: Ցուցանիշը գրանցելու համար Անրիից պահանջուել է 258 խաղ, իսկ Ռունիից՝ 358:

«ՌԷԱԼ» ՄՏԱԴԻՐ Է ԾԱԽՍԵԼ 330 ՄԻԼԻՈՆ ԵՐՈ

Ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ Մադրիդի «Ռէալը» հաղորդում է dailystar-ը: Արքայական ակումբը կը ձգտի ձեռք բերել Լոնդոնի «Տոտեմհեմի» եւ Անգլիայի հաւաքականի յարձակուող Հարի Բէյնին, Լոնդոնի «Չելսիի» եւ Բելգիայի հաւաքականի կիսապաշտպան Էդէն Ազարին, անգլիական «Էվերտոնի» պաշտպան Ջոնս Սթրոուզին եւ «Մանչեսթեր Եունայթեդի» իսպանացի դարպասապահ Դաւիթ Դէ Խէային:



«Ռէալը» կը բանակցի նաեւ «Մանչեսթեր Սիթիի» արգենտինացի յարձակուող Սերխիո Ագուերոյի եւ Թուրինի «Եուվեստուսի» ֆրանսիացի կիսապաշտպան Պոլ Պոգբայի տեղափոխութիւնների հարցով:

«Ռէալը» գրկուած կը լինի նոր խաղացողների յայտաւորելու իրաւունքից այս տարուայ ամրանը եւ յաջորդ տարուայ ձմեռանը:

ԱՐԹՈՒՐ ԱՐՐԱՅԱՄԻ ՅԱՋՈՐԴ ՄՐՑԱԿԻՑԸ ՋԻԼԲԵՐՏՕ ՈԱՄԻՐԵՍՆ Է



Պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեան Արթուր Աբրահամի յաջորդ մրցակիցը կը լինի 24-ամեայ Ջիլբերտո Ռամիրէսը: 35-ամեայ Աբրահամը մեքսիկացի բռնցքամարտիկի հետ կը մենամարտի Ապրիլի 9-ին, գրում է ESPN-ը:

Մենամարտի անցկացման վայրը դեռ չայտնի է: Քննարկուում են Բեռլինի, Նիւ Եորքի եւ Լաս Վեկասի տարբերակները:

Team Sauerland-ի ֆէյսբուքեան էջի համաձայն՝ WBO-ի գրասենեակում աճուրդի է հանուել Աբրահամի մենամարտի անցկացումն ընդունելու հեղինակային իրաւունքը, քանի որ Մարտի կազմակերպիչները համաձայնութեան չեն եկել:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով հեռաձայնել՝ (626) 398-0506